

Ն. Կ. ԿՐՈՒՊՆԿԱՅԱ



ԼԵՆԻՆԸ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ.

Ն. Կ. ԿՐՈՒԹՈՎԿԱՅԱ

Ի՞Զ Ե ԳՐԵԼ ՅԵՎ ԱՍԵԼ
ԼԵՆԻՆԸ
ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2842
—
806

A 13235



ԼՈՒՍԳՈՂԿՈՄԱՏԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԹԵՏՏՐԱՆ

1938

ՅԵՐԵՎԱՆ

ՅԵՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Այժմ, յերբ Հուստողկոմատին կից ըստեղծված է գրադարանային գործի հատուկ վարչություն, առանձնապես անհրաժեշտ ե սույն գրքույկի վերահրատարակությունը. նա պետք է լինի յուրաքանչյուր գրադարանային աշխատողի ձեռքում: Առաջին հրատարակությունը լույս տեսավ 100.000 տիրաժով, յերկրորդը՝ 30.000, բայց զնելու համար արդեն վոչ մի տեղ այդ գիրքը չես գտնի:

2-րդ հրատարակության համեմատությամբ ավելացված է յերկու նոր նյութ, վորոնք զետեղված են «Լենինյան Ժողովածու»-ի XXI հատորում: Դրանք են՝ 1) 1917 թ. նոյեմբերին Պետրոգրադի Հանրային գրադարանին ուղղած նամակը և 2) Ժկի 1918 թ. հունիսի 7-ի վորոշումը գրադարանային գործի դրվագքի մասին. ավելացված է նույնպես 1933 թ. հոկտեմբերի 6-ի «Պրավդա»-յի № 276-ում տպված՝ «Սոցիալիստական շինարարության կարևոր բնադրավառը» վերնագրով հոդվածը:

Այժմ, յերբ մեր յերկիրը հիմնականում

գրադետ ե զարձել, յերբ մասսաների ձգտումը զեկալի գիտություններն այնքան հսկայական են, վոր վոչ մի տեսակի դպրոցներ ի վիճակի չեն սպասարկելու սովորել ցանկացող հասակավորներին, և ինքնակը թության հարցերը մղվում են առաջին պլանը, — գրադարանների միջոցով ազգաբնակությանն անհրաժեշտ դրքեր առաջ մղելու գործը մասսաների մեջ ստանում ե առանձին նշանակություն:

Ահա! ինչու կուսակցությունը պահանջում է, վոր տվյալ գործը դրվի անհրաժեշտ բարձրության վրա: Լենինի մատնանշած ուղղությամբ պետք ե համառ ու շատ աշխատել՝ այդ գործն այնպես կանոնավորելու, վոր գրադարանները հարկավոր գրքով վորքան կարելի յե լավ սպասարկեն ազգաբնակության ամենալայն շերտերին: Գրադարանային գործի վրա պետք ե ուշադրություն դանեն կուսակցական ու խորհրդային բոլոր որդանները. գրադարանների կառուցման ու գրադարանային աշխատանքը կանոնավորելու գործում անհրաժեշտ ե ներդրավել ազգաբնակության ամենալայն շերտերին: Վոչ մի բան այնքան չի կարող ողնել գրան, ինչ այդ առթիվ Լենինն ե տսել:

Ն. Կրուպսկայա

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Սույն գրքույկի հին հրատարակությունը, վորը լույս է տեսել 1929 թվին նախ՝ 50.000 և ապա 100.000 որինակով—սպառվել է։ Տվյալ հրատարակությունն ավելի լրիվ է։ Լենինի՝ իր հարազատներին ուղղած նամակներից հաջողվեց տալ այն բանի պատկերը, թե Լենինի աշխատանքներում ինչպիսի՝ դեր է խաղացել գրադարաններից ոգտվելու գործը, թե ինչպես հմտորեն ու համառորեն նու կազմակերպել է այդ ոգտագործումը ծանրագույն պայմաններում (բանտում, աքսորում)։ Կարպինսկու հիշողությունների հատվածը լրացնում է այդ պատկերը։ 1917 թ. իմ կցագրումը (որուստա) Լենինի նամակներին՝ ցույց է տալիս, վոր մեր գրքերը կարդալուց հետո կամ բոլորովին նվիրում եյինք գրադարանին, կամ ուղարկում այնտեղ ժամանակավոր ոգտագործման համար։ Հետաքրքիր է նաև Վլադիմիր Իլյիչի նամակը Գորկու կնոջը—Մ. Ֆ. Անդրեյեվային, Մոսկվայի գեղարվեստական թատրոնի հայտնի արտիստին, վորտեղ նա ինդրում է Գորկուն կուկինի գրադարանին գրքերով ու հրատարակու-

թյուններով ոգնելու մասին կոչ դրել, և մաներամասն դրում ե, թե ինչի մասին պետք է ասել այդ կոչում ու ինչպես պետք է տարածել այն:

Այն պատկերը, թե ինչպիսի դեր են խաղացել գրադարանները Լենինի աշխատանքներում, ավելի պարզ ու ռելյեֆ ե դարձնում այն, թե ինչպիսի՝ ուշադրությամբ ու հոգատարությամբ եր վերաբերվում նա գրադարանային գործի կազմակերպմանը մեզնում—Խորհուրդների յերկրում:

Գրադարանային գործի դրվածքը նա համարում եր յերկրի կուտուրական մակարդակի ցուցանիշներից մեկը: Առաջին հրատարակության նյութերը մենք լրացրինք արտադրական պրոպագանդի մասին Լենինի թեղիսների քաղվածքով և նրա կազմած մի շարք փաստաթղթերով: Մենք բերում ենք Ժողովը՝ դական կոմիսարների Խորհրդի 1919թ. հունվարի 14-ի վորոշումը, վորակող Լուսժողկոմատին «նորից ի ցույց ե գրվում» նրա անբավարար հոգատարությունը գրադարանային գործի էանոնավոր կազմակերպման համար ու պահանջվում ե նախ՝ յեռանդադին միջոցներ ձեռնարկել գրադարանային գործի կենտրոնացման համար, և յերկրորդ՝ ամերիկան-չվեցարական սիստեմ մտցնել:

Յերկու շաբաթ հետո — 1919 թ. հունվարի 30-ին նոր հիշեցում ու պահանջ՝ ներ-

կայացնել գրադարանների ու ընթերցարանների ցանցի ուղղքի տարածման աճի մասին ամեն ամսյա տեղակադրեր։ Ժողկոմիորհի այդ յերկու վորոշումներն առանձնապես բնեռում են ուշադրությունը 1919 թ. փետրվարին Արտադապրոցական բաժնի գրադարանային հանձնաժողովին գրած Լենինի նամակի վրա։ Այդ նամակում նա դրում է գրադարանային գործում սոցմրցում մտցնելու անհրաժեշտության մասին։ Հիմա, յերբ սոցմրցումն այդպիսի՝ զեր և խաղում յերկրի կյանքում, Լենինի այդ նամակին առանձին հետաքրքրություն և ստանում։

Ներկա հրատարակության մեջ մենք վերատպում ենք նաև 1920 թ. նոյեմբերի 3-ի զեկրետը գրադարանային գործի կենտրոնացման մասին, իսկ նրա հետ նաև մի փաստաթուղթ, վորը մեծ հետաքրքրություն և ներկայացնում գրադարանային գործի կենտրոնացման հարցի մասին լենինի ունեցած հայցքների պարզաբանման տեսակետից։ Իլյիչի ցուցումով զեկրետի նախագիծը դրել եմ յես, ընդվորում յես ջանացել եմ մեղմորեն ձեսակերպել այն տեղերը, վորոնք վերաբերում են շփման միջզերատեսչական կետերին։ Իլյիչն այդ բոլոր տեղերն ուղղում է, կեսեր և գնում «և»-երի վրա։ «Լուսժողկոմատի կոմունիստ աշխատողներին» կենտկոմի դիրեկտիվներում լենինը խոսում է գրադարանների

մատակարարման գործի արմատական վերակառուցման մասին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Լենինի 1921 թ. մայիսի 17-ի նամակը Լիտկենսին, վորը ցույց է տալիս, թե գրադարանների մատակարարման գործին ինչպեսի՝ լրջագույն նշանակություն է տվել Վլադիմիր Իլյիչը: «Հարկավոր է,— գրում է այդ նամակում Իլյիչը,— վոր դուք (և մենք) բացարձակ ճշտությամբ խմանանք՝ ում նըստեցնենք (և՝ «Յենտրոպեչատ»)-ից և գրադարանային ցանցից անպայման յերկու հիմնարկություններից), յեթե խորհրդային յուրաքանչյուր գիրք լույս տեսնելուց մի ամիս (յերկու շաբաթ, վեց շաբաթ հետո) յուրաքանչյուր գրադարանում» չկա («Լեն. Փող.», XX, եջ 312):

Յեվլ, վերջապես, Համկ(ր)ի կենտրոնի 1921 թ. նոյեմբերի 16-ի շրջաբերականն ընդգծում է գրադարաններում վճար մտցնելու անթույլատրելիությունը:

Տաս տարի յե անցել այն ժամանակից, յերբ Իլյիչն արդեն չի կարող այլևս հողակարագանային գործի դրվածքի մասին:

Իլյիչի պատզամներն անդրադիտության վերացման գործում կատարվում են: Վերջին տարիներում այդ գործի մեջ են ներդրավվել ամենալայն մասսաները: Ժողովուրդը մեղմութեատ է դառնում, բայց գրքի կողեկ-

տիվ ոգտագործման, զբաղարանների ցանցի
աճման, յուրաքանչյուր նոր դուրս յեկող գըր-
քով զբանց մատակարարելու նկառմամբ՝
դործը չառ ավելի վատ է:

Պետք է և այդ բնագավառում կատարել
իլլիչի պատգամները նույնպիսի համառու-
թյամբ, վորպիսի համառությամբ մենք կա-
տարում ենք այդ պատգամներն անդրադի-
տության վերացման բնագավառում:

Ն. Կրուպսկայա

14 հունվարի, 1932 թ.

ԼԵՆԻՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Լենինը շատ մեծ ժամանակ եր անցկացնում գրադարաններում։ Յերբ նա Սամարայում եր ապրում, չափազանց շատ գրքեր եր վերցնում գրադարաններից։ Յերբ յեկավ Պիտեր, որերով նստում եր Հանրային գրադարանում։ Նա գրքերեր վերցնում նաև «Վոլոնեկոնոմիչեսկի» ընկերության և մի շարք այլ գրադարաններից։ Մինչև իսկ բանտում նըստած ժամանակ քույրը նրա համար գրադարանից գրքեր եր տանում։ Նա քաղվածքներ եր անում այդ գրքերից։ Լենինի յերկերի յերիբորդ հրապարակության III հատորում հավաստված է, վոր նա յուր «կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գիրքը գրելու համար հարկադրված է յեղել ողտվելու 583 գրքից։ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» գրքի մեջ վկայություններ կան այդ գրքերի մասին։ Կարո՞ղ եր Լենինն իր համար զնել այդ բոլոր գրքերը։ Նրանցից շատերը նույնիսկ վաճառքի չելին հանդում, որինակ՝ Լենինի համար հատկապես արժեքավոր գեմատվային վիճակագրական ժողովածուները։ Սակայն, բացի գրանից, Լենինն

այն ժամանակ ապրում եր վորագես ուստանող, մի փոքրիկ սենյակում և իր վրա դռոշներ եր ծախում: Նա հնարավորություն չուներ այդքան փող ծախսելու — հազարից վոչ պակաս այդ գրքերը զնելու համար, նա ժամանակ չուներ բոլոր դրախանութները վաղելու, վորպեսզի այդ գրքերը դոնի, կարգալու ժամանակ ել չեր մնա, առանց գրադարանային կատարողի նա նույնիսկ չեր ել իմանա այդ գրքերից շատերի պոյության մասին: Յել վերջապես նա տեղ չուներ պահելու այդ գրքերը: Կարգալով այդ գրքերը՝ նա վո՛չ միայն կարողացավ զրել մի այնպիսի մեծ ու կարևոր գիրք, ինչպիսին ե «Կապիտալիզմի դարձացումը», այլև միաժամանակ հիանալի կերպով ուսումնասիրեց այն ժամանակավա բանվորների ու գյուղացիների կյանքը: Իսկ առանց այդ բանի՝ նրանից չեր կարող դուրս գալ այն Լենինը, վորին մենք բոլորս գիտենք: «Կապիտալիզմի դարձացումը Առևտաստանում» գիրքը հրատարակվեց 1899 թվական:

Արտասահման ընկերությունից՝ Վլադիմիր Իլյիչն ավելի յեռանդադին սկսեց ուսումնակերպարաններից: Նա ստար լեզուներ դիմեր և այդ լեզուներով շատ գրքեր կարդաց: Նա յերբեք չեր կարող զնել այդ գրքերը, վորովհեան եմիզրացիայի մեջ ստիպված եր հաշվել յուրաքանչյուր կողեկը, տնտեսել այն

արամվացի, ուտեսաի և այլ բաների համար։
Բայց գիրք չկարդալով, արտասահմանյան
թերթերն ու ժուռնալները չկարդալով, իւլի-
չը չեր կարող կատարել այն աշխատանքը,
վորը նա կատարում էր, չեր ունենա այն դի-
տելիքները, վորոնցով նա այնքան հիանալի
զինված էր։

Յերբ կարդում ենք նրա «Նամակներ հա-
րազատներին», յերկում ե, թե նա ինչպիսի
նշանակություն եր տալիս զրադարաններին։

1895 թվին նա առաջին անգամ զնո՞ւմ ե
արտասահման։ բազմաթիվ նոր տարավորու-
թյուններ։ յերկու շաբաթ ապրում ե թեոլի-
նում, դիտում ե բանվորների կյանքը և միա-
ժամանակ պարապում Բեռլինի կայսերա-
կան զրադարանում։ 1896 թվին բանտ ե ընկ-
նում ե յերեք շաբաթ հետո արգեն կազմա-
կերպում ե զրադարանային զրքերից ոգտվե-
լու գործը։ Նա ոգտվում ե վո՛չ միայն բան-
տի զրադարանի զրքերից։ Նա հոգ ե տանում,
վոր բանտում նստած՝ ոգտվի զրսի զրադա-
րաններից։ Բանտարկվելուց յերեք շաբաթ
հետո Վլադիմիր իւլիչը գրում է իր հարա-
զատներին։

«...Գրական պարապմունքներ կալանա-
վորներին թույլատրվում են. յես դիտմամբ
այդ մասին աեղեկացա դատախազից, թեպետ
և առաջուց ել գիտեյի։ (Այդ թույլատրվում
ե նույնիսկ բանտում գտնվող կալանավորնե-
րին)։ Հենց նա հաստատեց, վոր բաց թողնը-

վող գրքերի քանակությունը չի սահ Էտնա-
փակվում։ Հետո, թույլատրվում է գրքերը
վերադարձնել, —հետեւապես կարելի յե ոդոք-
վել գրադարաններից։ Այդ տեսակետից, ու-
րեմն, զործերը լավ են։

Անհամեմատ ավելի լուրջ են մյուս խո-
չրնկոտները — գրքեր ճարելու տեսակետից։
Նաև գրքեր են պետք. յես ստորև կցում եմ
այն գրքերի ցուցակը, վորոնք անհրաժեշտ են
ինձ այժմ, —այնպես վոր նրանք ճարելը բա-
վական գլխացավանք կտառագործի։ Նույնիսկ
չղիտեմ, արդյոք կհաջողվի՞ ճարել բոլորը։
Համանարար կարելի յե հույս դնել «Վոյնո-
ւկոնոմիչեսկի» ընկերության գրադարանի
վրա (այնտեղից յես արդեն գրքեր եմ վերց-
րել ու գրավ թողել 16 ո.), վորը գրավով
գրքեր են բաց թողնում տուն տանելու՝ յերկու
ոմիո ժամանակով, բայց այդ գրադարանը
չառ թերի յե։ Այս, յեթե Հնարավոր լիներ
ողափելու (վորեւ գրողի կամ պրոֆեսորի մի-
ջոցով) համալսարանի և Փինանսների մինիս-
տրության գիտական կոմիտեյի գրադարա-
նից, այն ժամանակ արդեն գրքեր ճարելու
հարցը կարելի յե լուծված համարել։

Վերջին եւ ամենից դժվար բանը գրքերը
տեղ հասցնելու գործն ե։ Այս արդեն մեկ կամ
յերկու գիրք բերելու հարց չե. անհրաժեշտ է
գրքերը պարբերաբար, տեսական ժամանակա-
միջոցում հավաքել գրադարաններից, բերել

(յես կարծում եմ, վոր միանգամայն բայլական կլիներ յերկու շաբաթը մեկ անգամ, գուցե նույնիսկ ամիսը մեկ անգամ, յեթե միանգամից շատ դիրք բերվեր) և հետ տանել: Այս արդեն—յես նույնիսկ չգիտեմ, թե ինչողես կարելի յե կազմակերպել: Գուցե այսպես. գտնել վորեւ շվեյցար, կամ դռնապան, կամ ցրիչ, կամ մի աղա, վորին յես էաբողանայի վարձատրել, և նա դնար դրքերի հետեւից: Գրքերի վոխանակումը թե՛ ըստ աշխատանքի պայմանների, թե՛ դրադարաններից դուրս տալու տեսակետից՝ պահանջում ե, իհարկե, կանոնավորություն և ճշտապահություն, այնպես վոր այդ բոլորն անհրաժեշտ և կարգավորել:

«Ասելը հեշտ ե, անելը՝ դժվար...» Յես շատ լավ զգում եմ, վոր այս մտադրությունն այնքան ել հեշտ իրականացնելի չե, և վոր իմ «ալանը» կարող ե ցնորք դուրս գալ... Զ հունվարի 1896 թ. Լենին («Նամակները հարազատներին» 1931 թ., եջ 14—15):

Դրադարաններից գրքեր ստանալու և այդ գրքերը վլադիմիր Խլիչին բանտ հասցնելու գործն իր վրա վերցրեց Աննա Խլինիչնան:

Աքսորավայրի ճանապարհին Լենինը 1897 թ. մարտի 4-ից մինչև ապրիլի 30-ը ապրեց Կրասնոյարսկում: Այդ ժամանակամիջոցում նա հաճախում եր վոմն Յուղինի դրադարանը: Ահա թե Լենինն ինչ է գրում մորը Կրասնոյարսկից մարտի 10-ին.

«... Յերեկ վերջապես ընկա Յուղինի
այստեղի հոչակավոր գրադարանը, վորք
(Յուղինը) ինձ սիրալիր դիմավորեց և ցույց
տվեց իր գրապահոցները: Նա ժույլ տվեց
ինձ նաև պարապել այնտեղ, և յես կարծում
եմ, վոր այդ ինձ կհաջողվի: (Այստեղ յեր-
կու խոչընդուռ կա, նախ՝ նրա գրադարանը
քաղաքից գուրս ե, բայց տարածությունը
մեծ չե, ընդամենը մոտ յերկու վերստ, այն-
պիս վոր այդ հաճելի զրոսանք ե: Յերկրորդ՝
գրադարանի կարդապորումն ավարտված չե,
այնպես վոր յես կարող եմ տիրոջը չափա-
դանց ծանրաբեռնել հաճախակի գրքեր պա-
հանջելով): Տեսնենք՝ այդ ինչպես զուրս կու-
գործնականում: Կարծում եմ, վոր յերկրորդ
խոչընդուռն ել կվերացվի: Յես նրա գրադա-
րանին զեռ լիովին չեմ ծանոթացել, բայց
այդ համենայն դեպս գրքերի հիանալի հա-
վաքածու յե: Կան, որինակի համար, ժուռ-
նալների (ամենագլխավոր ժուռնալների) լրիվ
ընտրանքներ (подборы): ոկտած 18-րդ դարի
վերջից մինչև ներկա ժամանակները: Հույս
ունեմ, վոր կհաջողվի գրանք ողտագործել
այն տեղեկությունների համար, վորոնք այն-
քան պետք են իմ աշխատանքի համար...»
(նույն տեղում, եջ 26):

Նույն գրադարանի մասին նա գրում է
նաև մարտի 15-ի նամակում:

«...Գրադարան գնում եմ ամեն որ, և վո-

բովհետեւ գրադարանը քաղաքի ծայրամասից
2 վերստի վրա յեւ գտնվում, ուստի հարկ է
լինում, վոր յես որական 5 վերստ, մոտավո-
րապես մեկ ժամ, ճանապարհ գնամ: Այդպի-
սի զբոսանքից յես շատ գոհ եմ և զբոսնում
եմ հաճույքով, թեև հաճախ զբոսանքն ինձ
բոլորովին թմրեցնում է: Ինչպես յերեաց,
գրադարանում իմ առարկայից շատ ավելի
քիչ գրքեր կային, քան կարելի յեր յենթա-
գրել՝ դատելով նրա ընդհանուր մեծությու-
նից, բայց և այնպես ինձ համար ողտակար
վորոշ բան կա, և յես շատ ուրախ եմ, վոր
կարող եմ այստեղ ժամանակը բոլորովին ի-
զուր չանցկացնել: Հաճախում եմ նաև քաղա-
քային գրադարանը. այնտեղ կարելի յե նա-
յել ժուռնալներն ու թերթերը. նրանք այս-
տեղ հասնում են տասնմեկերորդ որը, և
յես դեռ ելի չեմ կարողանում ընտելանալ
այդպիսի ուշացած «նորություններին» (նույն
տեղում, եջ 27):

Ընկնելով աքսորավայրը՝ Շուշենսկոյե
գյուղը, վորտեղ թերթերն ու նամակները
հասնում են միայն տասներեքերորդ որը, և
նինը Սիրիրի այդ հեռավոր անկյունում ևս
ձգտում ե գլուխ բերել Մոսկվայի գրադա-
րաններից ողտավելու գործը:

1897 թ. մայիսի 25-ին նա Շուշենսկոյե-
յից Մոսկվա, իր քրոջը՝ Աննա Իլինինա
Յելլիգարովային գրում ե.



«...Յես դեռ չարունակ մտմտում եմ Մոսկ-
վայի գրադարանից ողտպիելու մասին. գրա-
համար այդտեղ վորեւ բան արե՞լ եք ար-
դյոք, այսինքն՝ մուտք գտե՞լ եք վորեւ հա-
սարակական գրադարան։ Բանն այն ե, վոր
յեթե հնարավոր լիներ վերցնել 2 ամիս ժամ-
կետով (ինչպես Ս. Պետերբուրգում, «Վոլնո-
եկոնոմիչեսկոյե» ընկերության գրադարա-
նում), ապա բանդերոլով առաքումն այնքան
թանգ չեր նստի (ֆունտը 16 կ., սպառվերի
համար՝ 7 կ., կարելի յե ուղարկել 4 ֆունտ
= 64 կ.) և, հավանաբար, ինձ համար ավելի
ձեռնտու կլիներ առաքման վրա փող ծախսել
և շատ գրքեր ունենալ, քան թե զգալի չափով
ավելի շատ փող ծախսել՝ սակավաթիվ գրքեր
գնելու համար։ Ինձ թվում ե, վոր այդ ամելի
հարմար կլիներ ինձ համար։ Հարցը միայն
այն ե՝ կարելի՞ յե գրքեր ստանալ այդպիսի
ժամկետով (գրավականով, իհարկե) վորեւ
լավ գրադարանից։ Համալսարանի գրադարա-
նից (յես կարծում եմ Միտյայի համար հեշտ
կլիներ գտուի բերել այդ կամ վորեւ ստանող
իրավաբանի միջոցով, կամ ուղղակի գնալ
քաղաքատնտեսության պրոֆեսորի մոտ և ա-
ռել, վոր նա ցանկանում ե աշխատել այդ
մասնագիտության գծով և գրքեր վերցնել
հիմնական գրադարանից։ Միայն այժմ հարկ
կլինի հետաձգել մինչեւ աշուն) կամ Մոսկ-
վայի իրավաբանական ընկերության գրադա-

բանից (այնտեղ պետք է տեղեկություններ հավաքել, վերցնել գրադարանի կատալոգը, իմանալ նոր անդամների ընդունելության սղայմանները և այլն) կամ մի այլ տեղից: Հավանաբար Մոսկվայում կան մի քանի լով գրադարաններ: Կարելի յե տեղեկանալ նաև մասնավորների մասին: Յեթե ձեզնից վորեւ մեկը զեռևս մնացել է Մոսկվայում, ապա, խնդրում եմ, տեղեկացե՛ք այդ բոլորի մասին:

Յեթե գնաս արտասահման, ապա հայտնի՞ր, և յես քեզ մանրամասն կդրեմ այնտեղից ստանալիք գրքերի մասին: Ինձ ուղարկի՞ր վորքան կարելի յե չատ ամեն տեսակի կատալոգներ՝ բուկինիստների և մյուսների (գրադարանների, գրախանութների): Քո Վ. Աւ.» (նույն տեղում, եջ 48):

Մորը և Մարիա Իլյինիշնային 1897 թ. հուլիսի 19-ին գրած նամակում Վլադիմիր Իլյիչը, պատուիսանելով իրեն համար քաղվածքներ անելու Մարիա Իլյինիշնայի առաջարկին, դրում է. «Քաղվածքներն, արդեն չգիտեմ, ովետք կդա՞ն արդյոք: Յես հույս ունեմ աշխանից կազմել Մոսկվայի կամ ՍՊԲ-ի վորեւ գրադարանի հետ» (նույն տեղում, եջ 57):

1897 թ. ձմեռ Իլյիչը նամակ է գրում Հարազատներին, վորից յերեսում ե, վոր վորչ բան հաջողվել և անել, բայց Իլյիչը նոր հնարավորություններ է փնտողում.

Մանյաշային

«Ստացա 2 (14) XII-ի քո բացիկը և Սեմյոնովի 2 գիրքը։ Շնորհակալություն՝ նրանց համար։ Նրանք հետ կուղարկեմ շուտով, մի շաբաթից վոչ ուշ (չորեքշաբթի որը (5/1) 24-ին, յես վախենում եմ, վոր փոստատարը բոլորովին չգնա մեղ մոտ)։

Պարզվեց, վոր հենց առաջին յերկու հատորում վոչ մի հետաքրքիր բան չկա։ Հասկանալի յե, վոր այդպիսի պատմություններն անխուսափելի յեն անծանոթ գրքեր դուրս դրելու ժամանակ, — և յես նախորոք պատրաստ եյի այդ բանին։

Հուսով եմ, վոր գոնե տուգանք չենք տամի ամիս ևս կզբեն։

Զհասկացա քո Փրազը՝ «Իրավաբանական գրադարանը մտնելու համար, — յես հարցել եմ կարլուկովին, — սետք ե իրավաբան լինել և իրավաբանական ընկերության յերկու անդամների յերաշխավորություն ներկայացնել»։ Միա՞յն։ Իսկ սետք չե՞, վոր ինքն ընկերության անդամ լինի։ Յես կաշխատեմ Պիտերի միջոցով ինձ համար յերաշխավորություն գտնել։

Վոր ընկերության անդամ կարող ե դառնալ նաև վոչ իրավաբանը այդ անկասկած ե։ Սեղմում եմ ձեռքդ։ Վ. Ու. (նույն տեղում, էջ 77)։

Սակայն քիչ թե շատ կարգավորել գրա-

պարանների լայն ոգտագործումը Շուշինսկոյ-
յելում չհաջողվեց նաև փոստային բնույթի
զժվարությունների պատճառով։

1898 թվի սեպտեմբերին Վլադիմիր Իլյի-
չը թույլտվություն է ստանում Կրասնոյարսկ
գնալ՝ ատամները բուժելու համար։ Նա ան-
սահման ուրախ եր այդ ուղևորության առ-
թիվ, բայց այդ ուղևորության ժամանակ ել
նա պատրաստվում եր Կրասնոյարսկի գրադա-
րանում քաղվածքներ անելու (նույն տեղում,
եջ 130)։

Վերագառնալով աքսորից՝ Լենինը բնա-
կություն հաստատեց Պոկովում։ 1900 թ.
մարտի 15-ի նամակում նա գրում է մորը.

«Հաճախ այցելում եմ գրադարան և զբու-
նում եմ»։ Եմիգրացիայի մեջ Լենինը չա-
փազանց շատ եր աշխատում գրադարաննե-
րում, բայց այդ բավական թույլ ե արտա-
հայտվել հարազատներին գրած նամակնե-
րում։

1902—1903 թ. թ., յերբ մենք ապրում ե-
ինք Լոնդոնում, Վլադիմիր Իլյիչը ժամա-
նակի կեսը անց եր կացնում Բրիտանական
թանգարանում, վորտեղ գտնվում է աշխարհի
ամենահարուստ գրադարանը, հիանալի կար-
գավորված սպասարկման տեխնիկայով։ Իլյի-
չը շատ մեծ չափով ոգտվում եր նաև Լոնդո-
նի ընթերցասրահներից, ինչպես այդ յերեսում
և 1902 թ. հոկտեմբերի 27-ին մորն ուղար-
կուծ նրա նամակից։

«Հոնդոնում շատ ընթերցասրահներ կան
(читалка) — մի սենյակ, վորտեղ մտնում են
ուղղակի փողոցից, այստեղ նույնիսկ նըս-
տելու բան չկա, այլ միայն կարդալու համար
հենարաններ (сторки) և փայտերին ամբոց-
րած լրապըրեր. մտնողը վերցնում է փայտին
ամբացրած լրապիրը և կարդալուց հետո կա-
խում իր տեղը: Այդպիսի ընթերցարանները
շատ հարմար են, և ամբողջ որվա ընթաց-
քում մեծ հաճախում ունեն» (նույն տեղում,
էջ 286):

Յերկրորդ եմիզբացիայի ժամանակաշրջաբ-
րորդքվել ելին վեճերը փելիսովիայական
հարցերի շուրջը, և Վլագիմիր Բլյիչը նոտել եր
«Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» դիր-
քը գրելու, 1908 թ. մայիսին նո Ժնեվից
մեկնեց Լոնդրն, վորտեղ մնաց մեկ ամսից ա-
վելի՝ հատկապես Բրիտանական թանգարա-
նում աշխատելու նպատակով:

Ժնեվում, վորտեղ մենք յեկանք՝ 1903 թ.,
Բլյիչն ամբողջ որեր եր անցկացնում «Ընթեր-
ցանության ընկերության» (Société de Lec-
ture) գրադարանում, վորտեղ կար հսկա-
յական գրադարան և աշխատելու հիմանալի
պայմաններ, ուր ստացվում ելին մեծ քանա-
կությամբ լրագրեր և ժուռնալներ՝ ֆրանսե-
րեն, գերմաներեն և անգլիերեն լեզուներով:
Այդ գրադարանը շատ հարմար եր պարագե-
լու համար: Ընկերության անդամները — մեծ

մասամբ ծեր-պրոֆեսորներ—Հազվագյւղ ելին
հաճախում այդ գրադարաննը. Իլյիչի տրամա-
դրության տակ եր մի ամբողջ կարինետ,
վորտեղ նա կարող եր զրել, անկյունից-ան-
կյուն ման դալ, հոգվածների մասին խորհել,
դարակներից վերցնել ցանկացած գիրքը,

Իլյիչը ժնեվում յեսանդադին ողափում
եր նաև կուկլինի անվան հաբուստ ռուսա-
կան գրադարանից, վորի կառավարիչն եր
ընկ. Կարպինսկին: Ապրելով այլ քաղաքնե-
րում, հետագայում այդ գրադարանից նա
գրքեր եր դուրս դրում:

Փարիզում Իլյիչը գլխավորապես ողաբ-
փում եր աղքային գրադարանից (Bibliothé-
que Nationale):

1909թ. ղեկտեմբերին յես գրեցի Իլյիչի
մորը՝ գրադարանում նրա կատարած աշխա-
տանքի մասին. «ահա արդեն յերկրորդ շտ-
րաթն ե՝ նա վեր է կենում առավոտյան ժա-
մի Տ-ին և գնում գրադարան, վորտեղից վե-
րադառնում եժ. 2-ին: Առաջին որերը դժվար
եր այդպես շուտ վեր կենալ, բայց այժմ դոհ
ե և սկսել է շուտ պառկել քնելու» («Նա-
մակներ հարազատներին», եջ 352):

Բացի Աղքային գրադարանից, Իլյիչը
շրջեց նաև Փարիզի մի շաբաթ այլ գրադարան-
ներ, սակայն նրանք քիչ ելին բավարարում
իլյիչին: Աղքային գրադարանում չկային ա-
վելի ուշ տարիների կատարողները, բացի

ՊՐԱՆԻՑ՝ ԳՐՔԵՐ ՄԱԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ ԳՈՅՉՈՂՅՈՒՆ
ՊՆԵՐԻՆ ԲՅՈՒՐՈՒԿՐԱՏԱԿԱՆ ՉԱՄ ՃԵԹԿԱՆՈՒ-
ԹՅՈՒՆՆԵՐ։ Առհասարակ ՄՐԱՆՍԻԱՅԱԸ ԳՐՈ-
ՎԱՐԱՆԱյին ԳՈՐԾՆ ԱՐԽԻ-ԲՅՈՒՐՈՒԿՐԱՏԻԼ ՃԵ-
ՎՈՒ ԵՐ ԳՐՎԱԾ։ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՌԱՅՈՆԱԿԱՆ ՊԵ-
ՐԱՊԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՂՄՎԱԾ ԵՐԻՆ ՀԱՄԱՐՅԱ մի-
այն բելետրիստիկայից, բայց ՆՐԱՆԳԻց ոգտ-
վելու իրավունք ստանալու համար ել պետք
եր վկայական բերել անստիրոջից, վորո-
պեաք և իր վրա վերցներ տնվորի կողմից ճըշ-
տապահությամբ գրքերը վերադարձնելու
պատասխանատվությունը։ Տանտերը յերկար
ժամանակ մեզ այդպիսի վկայական չեր տո-
լիս մեր աղքատ դրության պատճառով։ Այն
բանից, թե վորքան և կարդավորված գրա-
պարանային գործը, իլյիչը դատում եր կուլ-
տուրայի մակարդակի մասին. գրադարանա-
յին գործի դրությունը նրա համար լինդհա-
նուր կուլտուրականության ցուցանիշ եր։

Ահա թե ինչ է գրել նա իր մորը կրակո-
վից՝ 1914 թ. ապրիլի 15-ին։

«... Փարիզում աշխատելը հարմար չե,
(Bibliothéque Nationale)*-ը վատ և կարդա-
վորված, — մի անդամ չեր, վոր մենք հիշում
երինք ժնեվը, վորակեղ կարելի յեր ավելի լավ
աշխատել, կար հարմար գրադարան, կյանքն
ավելի պակաս ջղայնացնող և ավելի քիչ ան-

*.) Աղգային գրադարանը։ ԽՄԲ.

ժիտ եր: Իմ թափառման բոլոր վայրերից յես
կընտրեցի Լոնդոնը կամ Ժնևը, յեթե միայն
ոյդ յերկուսն ել այնպես հեռու չլինեցին: Ա-
ռանձնապես լավ ե Ժընեվին ընդհանուր կու-
տուրականությամբ և կյանքի արտակարգ
հարմարություններով: Իսկ այստեղ, իհար-
կե, կուլտուրայի մասին խոսել չարժե — հա-
մարյա ինչպես Ռուսաստանն ե, — գրադարա-
նը վատ ե, արխիանհարմար, բայց ինձ հա-
մարյա չի հաջողվում այնտեղ լինել...»
(նույն տեղում, եջ 401):

Յերբ մենք կրակովից յեկանք Բեռն, Իւ-
յիչը Մարիա Իլյինիշնային 1914 թ. գեկ-
տիմքերի 9-ին գրում եր.

«... Այստեղ գրադարանները լավ են, և
յես վատ չեմ տեղավորվել՝ գրքերից ոգտվե-
լու խմաստով: Ամենորյա լրադրային աշխա-
տանքի ժամանակաշըջանից հետո նույնիսկ
հաճելի յէ կարդալը: Նադյան այստեղ ունի
մանկավարժական գրադարան և մանկա-
գարժական աշխատություն և գրում...»
(նույն տեղում, եջ 404):

1916 թ. Փիետրվարի 7-ին Վլադիմիր Իւ-
յիչը գրում է Մարիա Իլյինիշնային. «Յես և
Նադյան շատ զոհ ենք Յյուրիից. այստեղ
լավ են գրադարանները» (եջ 414), իսկ 1916
թ. Փիետրվարի 28-ին գրում է մորը. «Մենք
այժմ ապրում ենք Յյուրիիսում: Յեկել ենք
այստեղի գրադարաններում պարապելու: Լիձն

այստեղ մեզ շատ և դուք գալիս, գրադարանները շատ ավելի լավ են թեսնի գրադարաններից, այնպես վոր այստեղ ելի կմնանք, թերես ավելի, քան ցանկանում եյինք» (Եջ 415):

Յեվ հետո նորից, հոկտեմբերի 9-ին, Մարիա Իլյինիշնային ուղղած նամակում կըկնում ե. «Յյուրիխում գրադարաններն ավելի լավ են և աշխատելն ավելի հարմար ե» (Եջ 417):

Շվեյցարիայում գրադարանային գործը հիանալի յե դրված: Առանձնապես լավ է կարգավորված գրադարանների միջև դրքեր փոխանակելու գործը: Գերմանական Շվեյցարիայի գիտական գրադարանները կապված են Գերմանիայի գրադարանների հետ և նույնիսկ պատերազմի ժամանակ Վլադիմիր Իլյիչին հաջողվում եր իրեն հարկավոր դրքերը գրադարանի միջոցով ստանալ Գերմանիայից:

Մյուսը—ընթերցողների հիանալի սպասարկումն ե, ամեն տեսակ բյուրով բատիզմի բացակայությունը, հիանալի կազմված կատալոգները, բաց գարակները, բացառիկ ուշադիր վերաբերմունքը դեպի ընթերցողը:

1915 թ. ամռանը մենք ապրում եյինք Ռոտհոռնի ստորոտի լեռներում, մի շատ խուլ գյուղակում, և այնտեղ փոստով գրադարաններից ստանում եյինք անվճար ուղարկվող գրքեր: Գրքերն ուղարկվում եյին ծարսվի

թղթապանակում, վորի վրա ամբացված եր
մի տոմս՝ մակագրությամբ, մի կողմում դըր-
փում եր այն մարդու հասցեն, վորին ուղարկ-
փում ե գիրքը, մյուս կողմում՝ ուղարկող գը-
րագարանի հասցեն։ Գիրքը վերադարձնելիս
պետք եր ձիայն շրջել մակագիր անեցող
տոմսը և տանել փոստը։

Վլադիմիր Իլյիչն ամեն կերպ գովում եր
շվեցարական կուլտուրան և յերազում այն
ժամանակին, թե ինչպես կկարգավորվի գրագարա-
նացին զործը Ռուսաստանում՝ հեղափոխու-
թյունից հետո։

Ն. Կրուպսկայա

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ, ՃԱՌԵՐԸ, ՀՈԴՎԱԾՆԵՐՆ
ՈՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ— Մ. Յ. ԱՆԴՐԵՅՎԱՅԻՆ

ԿԱՊՐԻ ԿՂԶՈՒՄ (ԻՏԱԼԻԱ)

(ԺԼՆԵՎ ՄԻՆՉԵՎ 1908 թ. ՄԱՅԻՍԻ 1-Ը)

Թանկադի'ն Մարիա Ֆյոդորովնա: Ու-
ղարկում եմ Ալեքսեյ Մաքսիմովիչին գրած
մեր գրադարանավարի նամակը:

Բանն ահա՝ թե ինչումն է: Ալեքսեյ Մաք-
սիմովիչին շատ եմ խնդրում ոռւսական թեր-
թերում գրել մի լեզար բաց նամակ, խնդրե-
լով՝ ողնել ժընեվի կուկլինի գրադարանին,
ուղարկելով նրան հեղափոխության դարա-
շըրջանի թերթեր ու նրա պատմությանը վե-
րաբերող նյութեր:

Մի կարճ նամակ, վորը պարզաբանի
լայն հասարակությանը, թե ինչու կարևոր
է ողնել այդ գրադարանին և իր՝ Մաքսիմ
Գորկու, և շատ ուրիշ, նրան հայտնի, գրա-
կանագետների աշխատանքների համար:

Զեղ խնդրում եմ տնօրինել այդ նամակը
հեկտոդրաֆելու (հուսով եմ՝ Զինովի Ալեք-
սեյեվիչը չի հրաժարվի այս բանում ողնել)

և այն քիչ թե շատ կարդին ուղղություն ունեցող ռուսական բոլոր լրագրերին և ժողովական ուղարկելու դործը:

Բարի յեղեք կազմակերպեցե՛ք այդ բոլորը:

«ԱԵՆ. ԺՈՂ.՝ XIII, Էջ 158):

Ի՞նչ ԿԱՐԵԼԻ ՅԵ ԱՆԵԼ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ*)

Արեմտյան պետություններում տարածված են վոչ քիչ փոտած նախապաշարմունքներ, վորոնցից զերծ ե սուրբ մայր Ռուսիան։ Այնտեղ կարծում են, որինակ, վոր հոկայական հանրային գրադարանները, հարյուր հազարավոր ու միլիոնավոր հատորներով, բոլորովին չպետք է կազմեն միայն մի խումբ դիտնականների, կամ վորպես թե՝ գիտնա-

*) Հողվածը գրել ե Վլադիմիր Խլիչը մինչեւ հեղափոխությունը— 1913 թ.— և տպագրվել ե «Ռազմական Պատմագիր» այնպիսի մի ժամանակ եր, յերբ բանվրական շարժումը Ռուսաստանում վերելք եր ապրում, Անդրկանը փոխադրվել եր Կրակով քաղաքը— սահմանին մոտ, ամեն որ գրում եր լայն ծավալով բանվրական մամուլում— «Պատմագիր» այնպիսի մասնակի տեսնված եր ուստական աշխատողների և IV Դումայի մեջ մտնող՝ բոլշևիկ-սպատգամավորների հետ։ Այդ այնպիսի մի ժամանակ եր, յերբ վլադիմիր Խլիչն հատուկ ուշադրություն եր նվիրում

կանների, ունեցվածքը, վորոնք ոգտվում են
այդ գրադարաններից։ Այստեղ տարրորինակ,
անհասկանալի, վայրենի նպատակ են դնում—
այդ հսկայական, անընդգրկելի գրադարան-
ները մատչելի դարձնել վո՞չ թե գիտնական-
ների, պրոֆեսորների և այլնայլ մասնագետ-
ների ցեխի համար, այլ մասսայի համար,
ամբոխի համար, փողոցի համար (ընդգծումն
իմն է. — Ն. Կ.)։

Գրադարանային գործի ինչպիսի՛ սրբա-
պղծություն։ Ինչպիսի՛ բացակայություն
«կարգի», վորով իրավացիորեն կարող ենք
պարծենալ մենք։ Գրքերից ոգտվելու համար

Ժողովրդական կյանքի կոնկրետ հարցերին, մեր պատ-
գամավորների համար ճառեր եր գրում, այդ թեմա-
ների շուրջը հողվածներ եր զետեղում «Պրավդա»-յում։
Այդ ժամանակներին ևն վերաբերում նրա մի շարք
հողվածները ժողովրդական կրթության մասին։ Բն.՝
կեր Բաղայելի համար նա դրում և «Ժողովրդական
լուսավորության մինիստրության քաղաքականության
Հարցի շուրջը» վերնադրով զեկուցումը։ Կուլտուրայի
ժողովրդական լուսավորության, դպրոցի հարցերին և
նվիրված նրա հողվածները՝ «Մուսներն ու նեղրերը»
«Աճող անհապատառխանություն», «Մանկական աշ-
խատանքը գյուղացիական տնտեսության մեջ», «Բան-
վոր կասակարողը և ներմալթուսականությունը»
«Հրեյական դպրոցի նացիոնալիզացիան»։ Բոլոր այդ
հողվածներում վաղեմիը իլիէը ցույց եր տալիս»։

Հարյուրավոր ձեսկանություններ ու սահմա-
նափակումներ հնարող տասնյակ չինովնիկա-
կան հանձնաժողովների կողմից քննվող ու
մշակող կանոնների փոխարեն, ուշադրու-
թյունը բևեռել այն բանի վրա, վոր նույնիսկ
յերեխաները կարողանան ոգտվել գրքերի
հարուստ ժողովածուներից, հոգալ այն մա-
սին, վոր ընթերցողներն իրենց մոտ, տանը,
կարողանան կարդալ պետական գրքերը։
Հանրային գրադարանի փառքն ու պարծան-
քը տեսնել վոչ այն բանում, թե ինչքան հազ-
վագյուտ բան կա այնտեղ 16-րդ դարի վոր-
եւ հրատարակությունից կամ 10-րդ դարի
քանի ձեռագրեր կամ, այլ այն բանում, թե

թե ինչպես խոր կապ կա քաղաքական կացութաձևի (սկլած) ու կուլտուրայի միջև, և մի շարք հոգվածնե-
քում—Ամերիկայի կուլտուրան,—վորը քաղաքացիա-
կան պատերազմից հետո, յերբ պայքար եր տեղի ու-
նենում ստրկության դեմ հսկայական հաջողու-
թյուններ ունեցավ կուլտուրական Փրոնտում, — հա-
կադրում եր ցարական Ռուսաստանի կուլտուրային։
Նա այդ հակադրումն աբեց նաև դրադարանային գոր-
ծի բնագավառում, ցույց տալով, թե ի՞նչ «կարելի
յե անել ժողովրդական կրթության համար», ի՞նչ
պետք ե անել և ի՞նչ չի կարող արվել ցարիզմի
որով։

ինչքա՞ն լայն շրջանառություն ունի գիրքը Ժողովրդի մեջ, բանի նոր ընթերցող է ներգրավված, վորքան արագ է բավարարվում զրքի յուրաքանչյուր պահանջը, ինչքա՞ն գիրք է տրված տուն տանելու, ինչքա՞ն յելխա յե ներգրավված գրադարանից ոգտվելու, կարդալու համար . . . (ընդգծումն իմն և — Ն. Կ.):

Տարորինակ նախապաշարմունքներ են սարածված արևմտյան պետություններում, և չի կարելի չուրախանալ, վոր մեր փութաքան իշխանությունը հոգատարությամբ ու խնամքով մեղ պահպանում է այդ նախապաշարմունքների ազգեցությունից, մեր հանրային հարուստ գրադարանները պահպանում ե փողոցից, խաժամուժից:

Իմ առջև ե գտնվում Նյու-Յորքի հանրային գրադարանի գրադարանին հաշվետվությունը 1911 թվի համար:

Այդ տարին Նյու-Յորքի հանրային գրադարանը հին յերկու շենքից փոխադրել են քաղաքի կառուցած մի նոր շենքը: Հատուրների ամբողջ թիվն այժմ մոտավորապես հասնում է յերկու միլիոնի: Այնպես պատահեց, վոր հաճախորդների ընթերցասրահից առաջին անդամը ռուսերեն գիրք պահանջեցին: Ն. Գրոտայի հեղինակությունն եր այդ՝ «Մեր ժամանակի բարոյական իդեալները»: Գրքի պահանջատոմոր տրվել եր առավոտյան ժ-

9-ից 8 ըուպե անց։ Գիրքն ուղարկվել է ընթերցողին ժ. 9-ից 15 ըուպե անց։

Մի տարում գրադարանը հաճախել է՝ 1658376 մարդ։ Ընթերցասրահում յեղել է 146950 ընթերցող, վորոնք կարդալու համար վերցրել են 911891 հատոր գիրք։

Բայց այդ գեռես գրադարանի գրքի շրջանառության փոքրիկ մասն ե։ Գրադարան հաճախել կարող են քչերը։ Կրթական դործի խելացի գրվածքը չափվում է նրանով, թե ինչքա՞ն գիրք և տրվում ընթերցողին տուն տանելու, ինչ հարմարություններ են տրամադրվում բնակչության մեծամասնությանը։

Նյու-Յորքի հանրային գրադարանը քաղաքի յերեք ոկրուգներում՝ Մանհատանում, Բրանքսում և Ռիչմոնդում (ընդամենը համարյա յերեք միլիոն բնակչությամբ) ունի քառասուներկու բաժանմունք, իսկ շուրջ կունենա 43-ը։ Բատ վորում սիստեմատիկաբար այն նպատակն է հետապնդվում, վոր յուրաքանչյուր բնակիչ իր տնից վոչ հեռու, քան յերեք քառորդ վերստի վրա, — այսինքն վոչ ավելի, քան տաս ըուպե ճանապարհ գնալով, — ունենա հանրային գրադարանի բաժանմունք, վորը հանդիսանում է ժողովրդական կրթության ամեն տեսակ հիմնարկների ու ձեռնարկությունների կենտրոնը։

1911.թ ընթացքում բաց են թողել տուն տանելու համար մոտավորապես ութ միլիոն

(7914882) Հատոր. չորս-հարյուր հազար հատոր ավելի, քան 1910.: Յերկու սեռի բոլոր տարիքի յուրաքանչյուր հարյուր բնակչին ընկնում է տանը կարդալու համար մեկ տարում բաց թողած 267 գիրք:

Գրադարանի 42 բաժիններից յուրաքանչյուրը վո՛չմիայն հնարավորություն և տալիս սեղում տեղեկատու գրքեր կարդալու և տան համար գրքեր ստանալու, այլ և շենք է հանդիսանում գիշերային դասախոսությունների, հանրային ժողովների, խելացի զվարճությունների համար:

Նյու-Յորքի հանրային գրադարանում արևելյան լեզուներով կա մոտ 15000 գիրք, ճրեական լեզվով—մոտ 20000, ոլավոնական լեզուներով—մոտ 16000: Գլխավոր ընթերցասրահում, բաց դարակների վրա, ազատ ընդհանուր ոգտագործման համար գրված ե մոտ 20000 հատոր: Նյու-Յորքի հանրային գրադարանը յերեխանների համար կազմակերպել ե առանձին կենտրոնական ընթերցասրահ, այդպիսի սրահներ հետզհետե բացելով նաև բաժանմունքներին կից: Գրադարանավարները հոգում են յերեխանների համար ամեն կարգի հարմարություններ ստեղծելու մասին ու տալիս են նրանց տեղեկանքներ: Յերեխանները վերցրել են գրքեր տանը կարդալու համար յերեք միլիոնից շատ քիչ պակաս — 2859888 հատոր (ընդհանուրի մեկ յերրորդից ավելի):

Հնիթերցատները հաճախող յերեխաների թիւ-
վը հասել է 1120915-ի:

Ինչ վերաբերում է գրքերի կորուստին,
ապա Նյու-Յորքի հանրային գրադարանը
կորչող գրքերի թիվը հաշվում է տուն բաց
թողնված յուրաքանչյուր 100000 գրքին՝
70- 80- 90 գիրք:Ահա՝ թե ինչպիսի կարգեր
գոյություն ունեն Նյու-Յորքում: Իսկ մեզ
մո՞տ... (Յերկեր, հ. 16, էջ 529):

ՊԵՏՐՈԳՐԱԴԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ*)

1917 թ. նոյեմբեր.

Հեղափոխությանը խելացիորեն, ի-
մաստալից կերպով, հաջողությամբ մաս-
նակցելու համար պետք է սովորել:

*) Լենինը յեղել է ՌԽՖՍՀ գրադարանային գործի
վերակազմությունը նախաձեռնողը: «Գրադարանային
գործը նա իր սրտին շատ մոտ եր ընդունում: Ինքն
անձամբ մշտապես պարապելով գրադարաններում՝ գի-
տեր, տեսնում եր, թե ինչպես մեր յերկիրն այդ
ֆրոնտում սարսափելի հետ է մնում»: (Ն. Կ. Կրուպս-
կայա «Ինչ ե դրել և ասել Լենինը գրադարանների մա-
սին» գրքույիկի նախաբանը՝ տես սույն ժողովածուն):
Հոկտեմբերյան հեղափոխության առաջին իսկ որերին
Լենինը գրեց իր առաջարկները Պետրոգրադի հանրա-
յին գրադարանին՝ նրա աշխատանքները նոր ձեռվ

Յարիզմի կողմից ժողովրդական լուսավորությանը հասցըած բազմամյա վնասի պատճառով գրադարանային գործը Պետրո-գրադում շատ վատ և դրված:

Անհապաղ և անպայման անիրաժեշտ են հետեւյալ հիմնական բարեփոխումները, վորոնց յելակետներն Արևմուտքի ազատ պետություններում, հատկապես Շվեցարիայում և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգներում վաղուց իրականացված սկզբունքներն են:

1) Հանրային գրադարանը (նախկին կայսերական) պետք է անհապաղ անցնի գրքերի փոխանակման՝ ինչպես Պիտերի ու ոլովվինցիայի քոլոր հասարակական ու պետական գրադարանների, այնպես և արտասահմանյան (Ֆինլանդիայի, Շվեցիայի և այլն) գրադարանների հետ:

2) Գրքերի առաքումը մի գրադարանից մյուս գրադարանին՝ պետք է որենքով ձրի Հայտարարվի:

3) Գրադարանի ընթերցասրահը պետք է բաց լինի, ինչպես արվում է կուլտուրական յերկրներում հարուստ մարդկանց սպա-

գերակառուցելու մասին: («Լեն. Ժող.» XXI, Էջ 204—205):

Այստեղ մեջ բերվող առաջարկները հանձնվել են Հանրային գրադարանին: Ն. Կ.

ասնը կող մասնավոր գրադարաններում ու ընթերցարաններում, — ամեն որ չբացառելով առն ու կիրակի որերը, առավոտյան ժ. 8-ից մինչև յերեկոյան ժ. 11-ը:

4) Ծառայողների պահանջվող քանակը այետք և անհապաղ հանրային գրադարան փոխադրվի ժողովրդական լուսավորության մինիստրության դեպարտամենտներից (ծավալելով կանանց աշխատանքը, նկատի ունենալով ռազմական պահանջը տղամարդկանց աշխատանքի նկատմամբ), վորտեղ 9/10-ը զբաղված են վո՛չ միայն անողութ, այլ և ժնասակար աշխատանքով:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԴՐԱՄԾԲԻ ՄԱՍԻՆ*)

ՃԿԽ-Ի ՎՈՐՈՇՈՒՄ

1918 թ. հունիսի 17

ՃԿԽ-ն ի ցույց է դնում Ժողովրդական Հուսավորության Կոմիսարիատին՝ նուստանում գրադարանային գործի ճիշտ

*) 1918—1919 թվականների ընթացքում Լենինը արդից սրել է ՃԿԽ-ի ուշադրությունը գրադարանների նոր ձևով աշխատելու հարցի վրա, 1918 թ. ապրիլի 26-ի ՃԿԽ գեկուցում լսեց արխիվների ու գրադարանների կենտրոնական վարչություն կազմակերպելու մասին և հանձնաժողով կազմեց՝ «արխիվների

դրվածքի նկատմամբ նրա անբավարար հոգացողության համար և հանձնարարում ե կոմիսարիատին անհապաղ ամենայեռանդուն միջոցներ ձեռք առնել 1-ին՝ Ռուսաստանի դրադարանային դործը կենտրոնացնելու համար, 2-րդ՝ շվեցարական-ամերիկան սիստեմ մտցնելու համար։

Ժողովրդական Լուսավորության կոմիսարիատին առաջարկվում ե ամիսը 2 անգամ Ժկի-ին հաշվետվություն ներկայացնելու մասին թե նա դործանականորեն ինչ ե արել այդ բնադավառում։

Կենտրոնական վարչություն կազմակերպելու մանրամասն նախադիմ, ինչպես և առանձնապես վողջ դրադարանային դործը շվեցարական—ամերիկան սիստեմով վերակազմելու նախադիմ մշակելու համար» (արձ. № 104, 5 իՄԵԼ արխ., № 11, 399)։ Հանձնաժողովի աշխատանքն առաջ եր գնում չսփրազանց դանդաղ տեմպով։ 1918 թ. հունիսի 7-ին, Ժկի-ում «Գիտությունների սոցիալիստական ակադեմիայի կանոնադրության» քննության ժամանակ (տես «Լեն. ժող.» 19XXI, եջ 207) կենինն ուրվագծեց այստեղ մեջ բերվող վորոշումը, վորը և լնդունեց Ժկի (Ժկի արձ. № 184, կետ 2, իՄԵԼ արխիվ № 11, 577)։ Վորոշման առաջին մասը հրապարակվել է 1919 թ. հունվարի 17-ի № 11 «Իզվեստիա ՎՅԻԿ»-ում։

ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ԴԵԿՐԵՏԸ

ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ԳՐԱՊԱՀՈՑՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒ-
ԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(Հոդված. 502, որինադր. ու կարգադր. ժող. № 52,
հրապարակված է 1918 թ. հունիսի 21-ին):

Լուծարքի յենթարկվող ու դատարկվող
պետական հիմնարկությունների բոլոր գրա-
դարանները, ինչպես նաև առանձին ընկե-
րությունների ու անձերի գրադարանները,
վորոնք լրիվ կազմով կամ մի մասով մտնում
են կառավարական հիմնարկների, հասարա-
կական կազմակերպությունների և ուրիշնե-
րի տնօրինության տակ, Ռուսաստանի ֆե-
դերատիվ Խորհրդային Հանրապետության
բոլոր վայրերում գտնվում են լուսավորու-
թյան ժողովրդական կոմիսարիատի հաշվառ-
ման մեջ ու նրա պահպանության ներքո. այդ
գրադարանների հետագա նշանակումը, նրանց
բաշխումը, նրանք բնակչության ոգտագործ-
ման հատկացնելը, նրանց համալրումը, այլ
և նոր գրադարանների ստեղծումը — կատար-
վում ե Ռուսաստանի Խորհրդային ֆեդերա-
տիվ Սոցիալիստական Հանրապետության
Լուսավորության ժողովրդական կոմիսա-
րիատի Գրադարանների Բաժնի կողմից: Այս
կամ այն ժողովրդական կոմիսարիատի ի-
րավասության տակ գտնվող գրադարաննե-

բի նկատմամբ Գրադարանների Բաժինն է-
բականացնում ե թվարկված Փունկցիանե-
րը՝ համաձայնության զալով համապատաս-
խան Ժողովրդական Կոմիսարիատների հետ:

Բոլոր Հիմնարկություններն ու կազմա-
կերպությունները, վորոնց վրա հաշվում են,
կամ վորոնց տնտեսության տակ գտնվում են
վորեւե տեսակի գրադարաններ, պարտավոր
են վոչ ուշ քան ս.թ. ողոստոսի 15-ը այդ
մասին իրադեկ անել Լուսավորության Ժո-
ղովրդական Կոմիսարիատի Գրադարանների
Բաժնին. սույն կանոնը չկատարելը դիտվում
ե վորպես հեղափոխական որինակարգի խախ-
տում ու յենթակա յե դատական պատասխա-
նատվության:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝

Վ. Ռևյանով (Լենին).

Գործերի Կառավարիչ՝

Վ. Բոնչ-Բրույեվիչ.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

1919 թ. հունվարի 14-ին

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդությ
ուորից ի ցույց ե գնում Լուսավորության Ժո-
ղովրդական Կոմիսարիատին՝ Խորսաստանի
գրադարանային գործի ճիշտ դրվածքի վե-

ըաբերյալ նրա անբավարար հողացողությունը և հանձնարարում է կոմիսարիատին անհատաղ ամենայեռանդուն միջոցառումներ ձեռնարկել, առաջին՝ Ռուսաստանի գրադարանային գործը կենտրոնացնելու համար, յերկրորդ՝ չվեցարական — ամերիկյան սփոռեմ մտցնելու համար:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի
Քարտուղար՝ Լ. Ֆոսիյեվա.

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ

1919 թ. հունվարի 30-ին

Հանձնարարել Լուսավորության Ժողովրդական կոմիսարիատի Գրադարանային Բաժնին ամեն ամիս հրապարակել ու Ժողովրդական կոմիսարների Խորհրդին ներկայացնել հակիրճ փաստական տվյալներ՝ Ժողովրդական կոմիսարների Խորհրդի 1918 թ. հունիսի 7-ի և 1919 թ. հունվարի 14-ի վորոշումների իրական կենսագործման մասին և գրադարանների ու ընթերցարանների թվի իրական ծավալման ու բնակչության մեջ գրքերի տարածման աճման մասին:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի
Նախագահ՝ Վ. Ռևլյանով (Լենին).

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի
Քարտուղար՝ Լ. Ֆոսիյեվա.

ԼԵՆԻՆԻ ՆԱՄԱԿԸ ՀՈՒՍՔՈՂԿՈՄԱՏԻ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԲԱԺՆԻՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի նախագահ
ննկեր Լենինի կողմից*)

Գրադարանային գործն... ամենից ավելի յէ պահանջում մրցության կոչ առանձին նահանգների, խմբերի, ընթերցողների և այլոց միջև։

Հաշվետվության ճիշտ կազմակերպումը պետք է ծառայի Յ նպատակի. 1) ինչպես խորհրդային իշխանությանը, այնպես և բոլոր քաղաքացիներին ստույգ ու լիակատար

*) Այդպիսի փաստաթուղթ 1919 թ. փետրվարին կառավագանձնագործության ժամանակակից բաժնի Գրադառանային բաժանմունքին բարեկալ է իլլիչը։ Առանձնացված է այն, ինչ վոր ընդգծել է իլլիչը։ Տեքստը պահպանված է առանց փոփոխությունների։ 1918—19 թվերին, յերբ խորտակված էյին հին հիմնարկությունները, Լենինն առանձնակի ուժով ընդգծում եր արադրողականության բարձրացման համար, նոր ձեռնության կարողության դաստիարակման համար, մասսաներին գիտելիքներով դիմումներու անհրաժեշտությունը։ Նա պահանջում եր հենց իրենց՝ մասսաների, իրեն՝ բնարկչության ներդրավումը կուլտուրական շինարարության գործում, նա սոցմրցման մեջ տեսնում էր մասսաների ակտիվությունը բարձրացնելու միջոցը, գործարար հաշվետվությունը, հաշվառքը բարձր աս-

կերպով ծանոթացնել այն բանին, ինչ վոր կատարվում է. 2) աշխատանքի մեջ քաշել իրեն՝ ընակչությանը. 3) գրադարանային աշխատողների մրցակցություն առաջ բերել:

Ըստ իս՝ հաշվետվությունների Փորմությարները պետք ե պատրաստվեն կենտրոնում, արտատպվեն նահանգներում, ուղարկվեն բոլոր գրադարաններին, ակումբներին և այլն:

Որինակների մեջ պետք ե առանձնացված լինեն (թավատառ) այն պարտադիր հարցերը, վորոնց չպատասխանելու համար գրադարանների վարիչները դատական պատասխանառվության են յենթարկվում, իսկ հետո պահանջել բազմաթիվ վոչ պարտադիր հարցեր:

արհճանի վրա դնելու միջոցը, առանց վորի չի կարելի խելացիորեն դնել աշխատանքը: Նա հաշվետվությունից պահանջում եր պարզություն և ճշտություն: Յեկայի բոլոր մոմենտներն արտացոլված են Լուսժողկոմատի արտադպրոցական բաժնին Վլադիմիր Իլյիչի տվյալն ցուցումների մեջ: Այժմ, 1933 թ., յերբ յերկիրն ընդդրկված ե սոցմրցմամբ, յերբ մենք տեսնում ենք նրա դրական արդյունքները, յերբ մենք տեսնում ենք, թե ինչ ավեց կուլտ-արշավը— իրենց՝ մասսաների ներդրավումը կուլտուրական շինարարության գործի մեջ,— մենք շատ ավելի մեծ ուշադրությամբ կկարդանք 1919 թ. վերաբերող՝ Լենինի ցուցումները: Այդ ցուցումներն անհրաժեշտ ե իրազործել կյանքում:

Ն. Կ. :

Հարցերի ձեռվ պարտադիր §§-ի շարքը
այետք և դասել բոլոր բարելավումները, վո-
րոնք կիրառվում են Շվեյցարիայում, Ամե-
րիկայում (և այլ յերկրներում), վորպեսզի
կարելի լինի խրախուսել պրեմիաներ տալը
(արժեքավոր հրատարակություններ, կոմ-
պլեկտեր և այլն) նրանց, ովքեր մացրել են
ամենից ավելի շատ բարելավումներ ու ամե-
նալավ յեղանակով: Որինակ՝ 1) կարո՞ղ
եք արդյոք ճշգրիտ տվյալներով ապացուցել
ձեր գրադարանի գրքերի շրջանառության
աճումը, կամ 2) ձեր ընթերցարանի հաճա-
խելիությունը, կամ 3) գրքերի կամ լրագրե-
րի փոխանակումն ուրիշ գրադարանների ու
ընթերցարանների հետ, կամ 4) կենտրոնա-
կան կատալոգ կազմելը, կամ 5) կիրակիորե-
րի ոգտագործումը, կամ 6) յերեկոների ող-
տագործումը, կամ 7) ընթերցողների նորո-
նար չերտերի՝ կանանց, յերեխանների, վոչ
ուսուների և այլն ներգրավումը, կամ 8) ըն-
թերցողներին ձեր կողմից տեղեկանքներով
բավարարելը, կամ 9) պարզ, գործնական յե-
ղանակների գործադրումը՝ գրքերը կամ
լրագրերը պահելու համար, նրանց պահպա-
նության համար, գրանց մեքենական համա-
խմբումն ընթերցանության միջոցին ու տե-
ղերը գնելը, կամ 10) գրքերը տուն տալը,
կամ 11) յերաշխիքների պարզեցումը գրքերը
տուն տալու դեպքում կամ 12) փոստով ու-
ղարկելու դեպքում և այլն և այլն:

Հավագույն հաշվետվությունների ու
հաջողությունների դեպքում պարզեցատրել
ողբեմիաներով...

Լենին

(«Կմիզոնշա» № 4/35, 26, 1— 1924 թ.)

ՎՈՂՋՈՒՅՆԻ ՃԱՌ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ፤ ՀԱՄԱԴՈՒՄԱՐԻՆ*)

... Յերբ յես Ժողովրդական կոմիսար-
ների Խորհրդում շոշափեցի... գրադարա-
նային հարցը, յես ասում եյի՝ այն գանդատ-
ները, վորոնք շարունակ լսվում եյին, թե
մեղավոր ե մեր արտադրական հետամնա-
ցությունը, մենք քիչ գրքեր ունենք և մենք
չենք կարողանում արտադրել այն բավարար
քանակությամբ, — ինքս ինձ ասում եմ—այդ
ճիշտ ե: Իհարկե մենք վառելիք չունենք,
գործարանները կազմած են, թուղթը քիչ ե,
և գրքեր ստանալ մենք չենք կարող: Այդ բո-
լորը ճիշտ ե, բայց բացի դրանից ճիշտ ե և

*) Արտադրոցական կրթության համառուսա-
կան ፤ Համագումարում 1919 թ. մայիսի 6-ին արտա-
սանած ճառը նպատակ ե ունեցել ընդգծելու գրադա-
րանային գործի ամբողջ Եշանակությունը մասսաների
կուլտուրական մակարդակի բարձրացման համար,
ընդգծելու այդ գործի քաղաքական նշանակությունը,
պլանայնուրյան անհրաժեշտությունն այդ գործում
նրա ուսցիոնալիզացիան: Ն. Կ.

այն, վոր մենք չենք կարողանում վերցնել
այն գրքույկը, վորը կա մեզ մոտ: (Ընդծումն
իմն ե:— Ն. Կ.) Այդ տեսակետից մենք շա-
րունակում ենք տառապել գեղջկական միա-
մտությունից ու գեղջկական անձարակու-
թյունից, յերբ մուժիկը, կողոպտելով աղա-
յական գրադարանը, փախչում եր տուն ու
վախենում՝ չլի՞նի հանկարծ վորեւ մեկը
հետ խլի այն, վորովհետև այն միտքը, վոր
կարող ե լինել ճիշտ բաշխում, վոր գանձա-
րանը ինչ-վոր ատելի մի բան չե, վոր գան-
ձարանը — բանվորների ու աշխատավորու-
թյան ընդհանուր ունեցվածքն ե, այդ գի-
տակցությունը նրա մոտ գեռես չեր կարող
լինել: Անղարդացած գյուղացիական մասսան
այդ բանում մեղավոր չե, և հեղափոխու-
թյան զարգացման տեսակետից այդ միանդա-
մայն որինական ե, — այդ անխռուսափելի մի
փուլ ե, և յերբ գյուղացին գրադարանը տա-
նում եր իր մոտ և ուրիշներից գաղտնի պա-
հում, նա այլ կերպ վարվել չեր կարող, վո-
րովհետև նա չեր հասկանում, վոր կարելի յե
Ռուսաստանի գրադարաններն ի մի միավո-
րել, վոր գրքեր բավական կլինեն՝ գրագետի
ծարավը հագեցնելու, և անգրագետին սովո-
րեցնելու համար: (Ընդգծումն իմն ե:— Ն.
Կ.): Այժմ անհրաժեշտ ե պայքարել կազմա-
լուծման մնացորդների դեմ, քառսի դեմ, գե-
րատեսչական ծիծաղելի վեճերի դեմ: Այդ

պետք է լինի մեր գլխավոր խնդիրը։ Մենք
պետք ե ձեռք դարկենք զբագետներին մորի-
լիզացիայի յենթարկելու և անդրագիտու-
թյան դեմ պայքարելու հասարակ ու կենսա-
կան գործին։ Մենք պետք ե ոգտագործենք
այն գրքերը, վոր ունենք, և սկսենք գրադա-
րանների կազմակերպված ցանց ստեղծելու
գործը, վորոնիք ոգնեյին ժողովրդին՝ ոգտա-
գործելու մեր ունեցած յուրաքանչյուր գոր-
քույկը, զուգահեռ կազմակերպություններ
չստեղծել, այլ միասնական, պլանաշափ մի
կազմակերպություն ստեղծել (ընդգծումն
լին ե—Ն. Կ.): Այս փոքրիկ գործի մեջ ար-
տացոլվում է մեր հեղափոխության հիմնա-
կան խնդիրը։

Յեթե մեր հեղափոխությունը չլուծի այս
խնդիրը, յեթե նա դուրս չդա իրապես պլա-
նաշափ միասնական կազմակերպություն
ստեղծելու ուղին, ուռասական անմիտ քառսի
ու անհեթեթության փոխարեն,— ապա այն
ժամանակ այս հեղափոխությունը բուրժուա-
կան հեղափոխություն կմնա, վորովհետեւ
գեպի կոմունիզմ զնացող պրոլետարական
հեղափոխության հիմնական առանձնահատ-
կությունը հենց այդ ե, իսկ բուրժուազիայի
համար բավական եր խորտակել հինը և ազա-
տություն տալ գյուղացիական տնտեսությա-
նը, վորը հենց նույն կապիտալիզմն եր վե-
րածնում, ինչպես և նախորդ ժամանակների
բոլոր հեղափոխությունների միջոցին։

Յեթե մենք կոմունիստների կուսակցություն ենք կոչվում, պետք է ըմբռնենք, վորմիայն այժմ՝ յերբ հաղթահարել ենք արտաքին արդելքները, խորտակել ենք հիմնարկները, մեր հանդես առաջին անգամ խակական ձեռվ ու ամբողջ հասակով ծառացել ե խսկական պրոլետարական հեղափոխության առաջին խնդիրը, — տասնյակ ու հարյուրմիլիոնավոր մարդկանց կազմակերպումը։ Մեկ և կես տարվա վորձից հետո, վոր մենք բոլորս արել ենք այս ասպարեզում, պետք ե, վերջապես, կանգնենք այն սւզիդ ճանապարհի վրա, վորը հենց կհաղթեր այն անկուլտուրականությանը և այն խավարին ու վայրենությանը, վորից մենք միշտ տառապելու առիթ ունենք։ (Յերկեր, — XXIV հատ. եջ 277-278)։

ԴԵԿՐԵՏ՝ ՈԽԹՍՀԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով գրքի ավելի և ավելի աճող հսկայական պահանջը՝ ժողովրդական կոմիսարիատի նկատմամբ առաջարկության տակ գանվող, այնպես և բոլոր մնացած գերատեսչությունների, հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների գրադարանները հայտա-

1. Բոլոր գրադարանները, ինչպես կուսավորության ժողովրդական կոմիսարիատի նկատմամբ առաջարկության տակ գանվող, այնպես և բոլոր մնացած գերատեսչությունների, հիմնարկությունների ու հասարակական կազմակերպությունների գրադարանները հայտա-

բարիվում են հանրամատչելի, համախմբվվում են ՌԽՖՍՀ միասնական դրադարանային ցանցի մեջ և հանձնվում են Լուսժողկոմատի (Քաղլուսգլխվարի) իրավասությանը:

2. Միասնական դրադարանային ցանցը կյանքում իրագործելու և աշխատանքը կոորդինացիայի յենթարկելու համար Քաղլուսգլխվարչության կից կազմվում է կենտրոնական միջդերատեսչական դրադարանային հանձնաժողով հետեւյալ կազմով. Լուսժողկոմատից և հոգի (Քաղլուս գլխվար. դպրոցական և դիտական սեկտոր և արհլուսգլխվար.), ՀԱՄԿԽ-ից,— 2 հոգի, ՀՌՀԿՎ-ից* 1 հոգի:

Ծանոթություն. Հանձնաժողովի անդամներին հաստատում է Լուսժողկոմատը:

3. Հանձնաժողովի իրավասությանը յենթակա յեն. ա) դրադարանների տիպերի սահմանումն ու փոփոխումը, բ) պլանների մշակումն ու հաստատումը և գրքային հարստությունների վերաբաշխումը, գ) այլ դերատեսչությունների դրադարանները Լուսժողկոմատի իրավասությանը հանձնելու կարգի սահմանումը, դ) դրադարանային ցանցի ծավալումը, ե) հատուկ տեխնիկական

*) Հանրապետության Ռազմահեղափոխական Խորհրդի Քաղաքական վարչություն: ԽՄԲ.:

բնույթի գրադարաններից ոգտվելու կարգի
սահմանումը և նրանց համալրումը՝ շահա-
գրդոված գերատեսչության հետ համաձայ-
նության դալով, զ) դպրոցական գրադարան-
ներից ոգտվելու կարգի սահմանումը և ման-
կական ընթերցանության կազմակերպումը:

4. Տեղական հանձնաժողովներ կազմա-
կերպվում են Պետական հրատարակչության
տեղական բաժանմունքներին կից՝ քաղլուս-
բաժնի, զինկոմատի, ժողկրթբաժնի և արհ-
միությունների տեղական միավորման ներ-
կայացուցիչներից:

5. Միասնական գրադարանային ցանցի
մեջ (բացի հասուկ գրադարաններից), մատ-
նող բոլոր գրադարանները մատակարարվում
են տեղական հաշվիչ-բաշխիչ հանձնաժողով-
ների միջոցով, վորոնք գրքերն ստանում են
Պետական հրատարակչության կից Կենտրո-
նական բաշխիչ հանձնաժողովից:

6. Կենտրոնում, Քաղլուս. Գլխ. վարչու-
թյան գրադարանային յենթարաժնին կից
կազմակերպվում է կենտրոնական գրադարա-
նային կոլեկտոր, վորը նոր կազմակերպվող
տարրեր տիպի գրադարանների համար գրքե-
րի կոմպլեկտաներ և մատակարարում ժողո-
վը ըստական կրթության գավառային բաժին-
ներին:

7. Քաղլուսվարների գրադարանային ուկ-
ցիաներին կից կազմակերպվում են գրադա-

քանային կոլեկտորներ (բաշխիչներ), վորոնք
ունեն հրահանգիչների հաստիք և կատարում
են դրազարանների կոմպլեկտավորման ամ-
բողջ աշխատանքը:

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի

Նախագահ՝ Վ. ՌԻԼՅԱՆՈՎ (ԼԵՆԻՆ)

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի
գործերի կառավարիչ՝
Վ. ԲՈՆՉ-ԲՐՈՒՅԵՎԻՉ

Ժողովրդական կոմիսարների Խորհրդի
քարտուղար՝ Լ. ՖՈՏԻՅԵՎԱ*

Հոյեմբերի 1920 թ.

ՀԱՅՎԱԾ Ս.Բ.ՏՐԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅՑԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԵԶԻՍՆԵՐԻՑ

... 7. արտադրական լրագիրը պետք է
լինի պոպուլյար, միլիոններին մատչելի լի-
նելու խմաստով, սակայն չպետք է ընկնել
ծայրահեղ պոպուլյարականության (ուսուլ-
արհիկանության) մեջ։ Չի ջնել մինչև անդարդացած
ընթերցողի աստիճանը, այլ անշեղորեն —
շատ զգույշ աստիճանականությամբ — բարձ-
րացնել նրա զարգացումը։ Մի քիչ տեղ ա-
ռանձնացնել, մոտավորապես $\frac{1}{4}$ -ից վոչ ավե-
լի, — քաղաքականությանը։ Գլխավոր տե-

*) Կառավարական որենքների և կարդադրություն-
ների ժողովածու — 1920 թ. № 87, էջ 439։ ԽՄԲ։

Ղը—միասնական տնտեսական պլանին, աշխատանքային ֆրոնտին, արտադրական պլոպագանդային, կառավարելու դործը բանվորներին և գյուղացիներին սովորեցնելուն, խորհրդային հիմնարկությունների ու տնտեսությունների որենքների ու ձեռնարկումների իրական կենսագործման ստուգմանը, լայն ճիշտ մտքերի փոխանակությանը մասսայական ընթերցողի հետ:

8. Լրագրում տպվող, լրադրին ուղարկվող, ինչպես նաև այլ նյութերը պետք է սիստեմատիկորեն պարբերաբար վերահրատարակվեն գրքույկներով ու թուցիկներով՝ զրադարաններին և ապա տվյալ արտադրության բոլոր գործարաններին ու ձեռնարկություններին պարտադիր կերպով մատակարարելու համար։ Գրքույկներն ու թուցիկները պետք ե սիստեմավորեն նյութերն ըստ արտադրությունների։ Դասադրքերի և արտասահմանյան տեխնիկայի տեսությունների հետ միասին այդ նյութը պետք է ծառայի պրոֆտեխնիկական ու պոլիտեխնիկական կրթության տարածման համար։

Առանձնապես լրագրի, ինչպես նաև արտադրական գրքույկների ու թուցիկների ավելի ճիշտ բաշխումը ՌԽՖՍՀ բոլոր գրադարաններին՝ պետք է դառնա հատուկ ուշադրության առարկա (Յերկեր, XXV հատ., եջ 479)։

«ԱՐԵՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԿՈՄՈՒՆԻՍՏ-ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ
ՈՒՂՂԱԾ՝ ԿԵՆՏԿՈՄԻ ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐ»-ի Յ

(«Պրավդա» № 25, 5 փետրվարի 1921 թ.)

...7. Չափաղանց անբավարար եւ գրված
նաև՝ ինչպես դպրոցական, այնպես և վոչ
դպրոցական գրադարաններին ու ընթերցա-
րաններին լրադրեր, բրոշյուրներ, ժուռնալներ
ու գրքեր բաշխելու գործը։ Այստեղից բըդ-
խում ե այն, վոր լրագիրն ու գիրքը խլում ե
խորհրդային ծառայողների բարակ շերտը և
անչափ քիչ ե հասնում բանվորներին ու գյու-
ղացիներին։

Անհրաժեշտ ե ամբողջ այդ գործի արմա-
տական վերակազմումը (Յերկեր, XXVI հ.,
էջ 159)։

«ԱՐԵՍԺՈՂԿՈՄԱՏԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ»
ՀՈԴՎԱԾԻՑ

... 1920 թ. նոյեմբերի 3-ին ԺԿԽ հրա-
տարակել ե դեկրետ «Գրադարանային գործի
կենտրոնացման մասին» (Որենքների Ժողովա-
ծու, 439 հոդված, 1920 թ. № 87), ՈՒՖԱՀ
միասնական գրադարանային ցանց ստեղծելու
մասին։

Ահա՛ մի քանի փաստական տվյալներ,
վոր այս խնդրի վերաբերմամբ ինձ հաջող-
վեց ստանալ ընկեր Մալկինից («Վենտրոպե-
ուատե»-ից), և ընկեր Մողեստովից (Ժողո-

Վրդական կրթության Մոսկվայի բաժնի գրա- դարանային սեկցիայից) : Կենտրոնական Խոր- հըրդային Ռուսաստանի (Հաշված Սիբիրը և Հյուսիսային Կովկասը) 38 նահանգների, 305 գավառների գրադարանների թիվը հետեւյալն էր .	
Կենտրոնական գրադարաններ	342
Ռայոնական քաղաքային »	521
Վոլոստային »	4.474
Շրջիկ »	1.661
Խրճիթ ընթերցարաններ	14.739
Այլ (գյուղական, մանկական, տեղե- կատու, զանազան հիմնարկների, զանազան կազմակերպությունների) .	12.203

Ընդամենը 33.940

Ընկեր Մոդեստովին իր փորձի հիման վրա
յենթագրում ե, վոր այս գրադարանների մոտ
 $\frac{3}{4}$ -ն իսկապես գոյություն ունի, իսկ մնացա-
ծը՝ միայն թղթի վրա յե: Մոսկվայի նահան-
գում, ըստ «Յենտրոպեչատ»-ի տվյալների,
կա 1.223 գրադարան, ըստ ընկեր Մոդեստո-
վի տվյալների՝ 1.018, այս թվում՝ 204-ը
քաղաքում և 814-ը նահանգում, չհաշված
արհմիությունների գրադարանները (հավա-
նորեն մոտ 16) ու զինվորական գրադարան-
ները (մոտ 125):

Վորքան կարելի յե գատել առանձին նա-
հանգներին վերաբերող տվյալների համեմա-

տությունից, այս թվերի հուսալիությունը
շատ մեծ չէ. վայ թե իրականում $75^0/0$ ավել-
լի պակաս լինի, քան նշանակված և ցուցակ-
ներում։ Վյատկայի նահանգում, որինակ,
1703 իրավաբարձրացարան կա, Վլադիմիրի
նահանգում՝ 37, Պետրովդրադի նահանգում՝
98, Իվանովո-Վոլնեսենսկի նահանգում՝ 75,
և այլն։ «Այլ» գրադարաններ կան Պետրո-
վրադի նահանգում՝ 36, Վորոնեժի նահան-
գում՝ 825, Ռոֆայի նահանգում՝ 525, Պոկո-
վի նահանգում՝ 31 և այլն։

Բատ յերկութին, այս տվյալները հենց
այն են ցույց տալիս, վոր բանվորների ու
գյուղացիների մասսայի վերելքը դեպի գի-
տություն — վիթխարի յե, կրթության ու
գրադարաններ ստեղծելու ճգումը, —հզոր,
«ժողովրդական», բառի իսկական իմաստով։
Սակայն ժողովրդի այս ճգումը կազմակեր-
պելու, կարգավորելու, ձևակերպելու կարո-
կությունից, այս ճգումանը նիշտ բավարա-
րում տալու կարողությունից մենք շատ, շատ
հեռու յենք։ Իսկապես միասնական գրադա-
րանային ցանց ստեղծելու վրա պետք է դեռ
շատ, անչափ շատ ու համար աշխատել (ընդ-
դումն իմն ե։— Ն. Կ.):

... Հարկավոր է ճդտել և հասնել այն
բանին, վոր լրագիրն ու գրքերը, ըստ կանո-
նի, ձրի բաշխվեն միայն գրադարաններին ու
ընթերցարաններին, որանց ցանցին, վորը

կանոնավոր սպասարկում ե ամբողջ յերկրին,
բանվորների, զինվորների, գյուղացիների
վողջ մասսային։ Այն ժամանակ ժողովուրդը
հարյուրապատիկ անգամ ավելի քափով, ա-
րագ, հաջողությամբ կրնքանա դեպի գրա-
գիտությունը, դեպի լույսը, դեպի գիտու-
թյունը։ Այն ժամանակ լուսավորության
գործն առաջ կրնքանա յոթմղնանոց ֆայլե-
րով (ընդգծումն իմն ե։— Ն. Կ.)։

Ակնառու դարձնելու համար, իրրե որի-
նակ, բերենք մի փոքրիկ հաշիվ. 350 հազար
«իզվեստիա» ու 250 հազար «Պրավդա» ամ-
բողջ Ռուսաստանին։ Մենք աղքատ ենք։
Թուղթ չկա։ Բանվորները մրասում ու քաղցում
են, մերկ են, բորբիկ են։ Մեքենաները մաշ-
ված են։ Շենքերը փլվում են։ Յենթադրենք,
թե մենք ամբողջ յերկրում 10·000-ից քիչ ավե-
լի վոլոստների համար ունենք 50·000 գրադա-
րան ու ընթերցարան, սակայն վո՞չ թե թղթի
վրա, այլ իրապես։ Յուրաքանչյուր վոլոս-
տին՝ 3-ից վո՞չ պակաս, և յուրաքանչյուր
գործարանին կամ Փարբիկային, յուրաքան-
չյուր զորամասին՝ անպայման մեկական
հատ։ Յենթադրենք, թե մենք սովորել ենք
անել վո՞չ միայն «առաջին քայլը կապիտա-
լիդից դեպի կոմունիդմ», այլև յերկրորդ ու
յերրորդ քայլը։ Յենթադրենք, թե մենք սո-
վորել ենք ուղիղ բաշխել Յական որինակ
լրագիր յուրաքանչյուր գրադարանին ու ըն-

թերցարանին, վորոնցից 2-ը, յենթաղրենք, «պատերին փակցնելու» համար ե (յենթաղրելով, վոր մենք չորրորդ քայլն ենք արել կապիտալիզմից գեղի կոմունիզմ, յես թույլ եմ տալիս մտածել, համարձակվում եմ մտածել՝ վոր բարբարոսական ձևով «փակցնելու» փոխարեն, վորը փչացնում է լրագիրը, մենք այն ամրացնում ենք փայտե մեխերով—յերկաթե մեխեր չունենք, «չորրորդ քայլում» ևս գեռ յերկաթի պակասություն կզգանք — ամրացնում ենք հարթ տախտակի վրա, վորպեսզի հարմար լինի կարդալու և լրագիրը պահպանվի): Յեկ այսպես, յերկուական որինակ 50.000 դրաղարաններին ու ընթերցարաններին՝ պատերին «փակցնելու» համար, մեկական որինակ ել՝ պահելու համար։ Այնուհետեւ յենթաղրենք, վոր «Խորհրդյուրո»-ներին իզուր տեղը լրագիր տալը սովորել ենք չափավորել, առենք, վոչ ավելի, քան մի քանի ժաղար որինակ՝ ամրողջ Խորհրդային Հանրապետության յերես առած «բարձր աստիճանավորներին»։

Այսքան համարձակ յենթաղրությունների դեպում 160, դիցուք 175.000 որինակը բավական կլինի ամրողջ յերկիրին հինգ անգամ ավելի լավ, քան այժմ։ Բոլորը լրագրեց տեղեկություն ստանալու հնարավորություն կունենան (յեթե, ինչպես հարկն ե, կազմակերպվեն շրջիկ դրագարան՝ ընթերցա-

բաններ, վորոնց կարևորությունն իմ կարծիքով, այնքան հաջողությամբ որերս պաշտպանում եր ընկեր Ֆ. Դորլերը «Պրավդայում»): Յերկու լրագիր՝ 350·000 որինակ: Այժմ 600·000 ե, վոր հավաշակում են «Սորելյուրո»-ները, իզուր փչացնում, «ծխախոտի թռողթ» դարձնում և այլն, պարզապես կապիտալիստական սովորույթների ուժով: Տնտեսումը կլիներ 250·000 որինակ: Այլ խոսքով՝ տնտեսած կլինեյինք մեզ համար, չնայած մեր աղքատությանը, յերկու ամենորյա լրագիր՝ 125·000-ական որինակով: Յեվ յուրաքանչյուր այդպիսի լրագրի մեջ ամեն որ կարելի յեր ժողովրդին տալ լուրջ ու արժեքավոր գրական նյութ, լավագույն ու կլասիկ բելետրիստիկա, հանրակրթական դասագրքեր, գյուղատնտեսական դասագրքեր, արդյունաբերական դասագրքեր (ընդդումն իմն ե:—Ն. Կ.): Յեթե Փրանսիական բուրժուաները, դեռ պատերազմից առաջ արդեն, սովորել եյին կող վաստակելու նպատակով ուժմաններ հրատարակել ժողովը դի համար վոչ թե $3\frac{1}{2}$ Փրանկով, ինչպես ազայական գրքերն եյին, այլ 10 սանտիմով (այսինքն 35 անգամ ավելի եժան, նախապատերազմյան կուրսով՝ 4 կոպեկ), պըութարական լրագրի նման, ապա ինչո՞ւ մենք ևս չսովորենք նույն ձեռով վարվել կապիտալիզմից դեպի կոմունիզմ արվող յերկրորդ քայ-

Ա ժամանակ : Ինչո՞ւ մենք ել չսովորենք՝ նույն կերպ վարվելով՝ համեմ այն բանին, վոր մեկ տարում — նույնիսկ մեր այժմյան աղքատ վիճակում—50·000 գլանարաններից ու ընթերցարաններից յուրաքանչյուրին 2-ական որինակ հատկացնելով՝ ժողովրդին տանք բոլոր անհրաժեշտ դասագրքերն ու համաշխարհային գրականության, արդի գիտության, ժամանակակից տեխնիկայի բոլոր անհրաժեշտ կլասիկները (ընդգծումն իմն ե:—Ն. Կ.): Կսովորենք: (Յերկեր, XXVI հ., եջ 163):

ՆԱՄԱԿ ԸՆԿ. ԼԻՑԿԵՆՍԻՆ

17 մայիսի 1921 թ.

«Նովայա Մետլա»-ն Յենտրոպեչատում նշանակելու առիթով, պետք է ոգտվել մոմենտից ու սահմանել նշտորոշ վարչական սլատասխանառվությունն.

1) ամենաճշգրիտ ձեռով գրավոր սահմանել՝ ինչի՞ համար են պատասխանառու Յենտրոպեչատի պետը և նահանգային պետերը:

2) նույնը և գրադարանային ցանցի նըկառմամբ.

ա) համապետական (Հանրային և Ռումյանցելյան) .

բ) նահանգական

դ) գավառական

դ) վոլոստային գրադարանների (յեթէ վաղաժամ չե. յեթէ Դուք չեք վորոշել առայժըմ սահմանափակվել դավառականներով) . . .

3) հարկավոր ե, վոր Դուք (և մենք) բացարձակ ճշությամբ խմանաք՝ ո՞ւմ նըստեցնել (և' «Ճենտրոպեչատ»-ից, և' դրադարանային ցանցից.— անզայման այդ յերկու հիմնարկներից ել), յեթէ մեկ ամիս անց (2 շաբաթ, վեց շաբաթ) Խորհրդային յուրաքանչյուր գիրք լույս տեսնելուց հետո, այդ գիրքը չկա յուրաքանչյուր գրադարանում: Այս մասին ինձ կարն հաղորդագրություն ուղարկեցեք: Լենին: («Լեն. Ժող.», XX, եջ 312):

«ՏԵՂԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ԱՐՏԱՍԱՆԱԾ ՀԱՅԻՑ

Ճառ՝ արտասանած Համառուսական կդկ 1921 թ.
մայիսի 30-ի նիստում

Հաշվետվությունները տպագրելու գլխավոր նպատակներից մեկն ե՝ դրանք մատչելի դարձնել անկուսակցական մասսային ու առհասարակ բնակչությանը: Մենք դրան չենք կարող հասնել մասսայական արտադրության միջոցով, այդ հաշվետվությունների մասսայական տպագրումով, այլ միայն գրադարաններում կենտրոնացնելու միջոցով (ընդգծումն իմն ե—Ն. Կ.): Իսկ քանի վոր այդպես ե, ապա պետք է սահմանել աշխատանքի այն-

պիսի յեղանակ, վորպեսզի հաշվետվությունների համառոտ բովանդակությունը, այն բանի եյությունը, վոր ամենից ավելի յեւաքրքրում բնակչությանը, անպայմանորեն տպագրվի: Դրա համար տեխնիկական հնարավորություններ կան: Յելույթ ունենալուց առաջ յես տեղեկացա «Գլավրում»-ի ներկայացուցչից: Նա ճշգրիտ հաշվետվություն ներկայացրեց 339 գալառական կետերի վերաբերմամբ, վորը ցույց է տալիս, վոր գալառական կետերից յուրաքանչյուրում տպագրական հնարավորություններ կան, կա նաև ամենահամառոտ հաշվետվություն տպագրելու համար անհրաժեշտ քանակությամբ թուղթ: Ընդդմին նա հաշվել է այն ձևով, վոր գալառական կենտրոններից փոքրագույնը տպում է մեկ տպագրական թերթ, ինքնը ստինքյան հասկանալի յե՝ ամիսը մեկ անգամ: Ամիսը մեկ անգամ—դա չափազանց հաճախ է: Կառամանեք արդյոք դուք յերկու ամիսը, կամ չորս ամիսը մեկ անգամ, գուշե և ավելի յերկար ժամկետ,—այդ կարվի, բայց յերեսութին, տեղերի ցուցումների հիման վրա: Որինակների թիվը նա յենթաղբում է հազար, և այդպիսով հաշվում է, վոր թղթի պահանջվող քանակությունն այժմ առձեռն ունենք: Հազար որինակը կապահովեր այդ հաշվետվությունները տրամադրելու առնընվազն բոլոր գալառական գրադարաններին

(ընդգծումն իմն ե—ն. Կ.), և հետեւապես,
Հնարավորություն կտար, վոր հաշվետվու-
թյուններին ծանոթանան բոլոր նրանով հե-
տաքրքրվողները և, մասնավորապես, ան-
կուսակցական մասսաները։ Իհարկե, սկզբում
դործը պետք կլինի դնել վորպես փորձ. յե-
րաշխավորել, վոր այն կհաջողվի միանդա-
մից և վոչ մի թերություն չի լինի, իհարկե
չի կարելի։

Յեզրափակելով իմ վոչ մեծ լրացումը՝
յես ցանկանում եմ ընդգծել մի բան։ Ամենից
կարեռը հարցերից մեկն այժմ անկուսակցա-
կաններին աշխատանքի մեջ լայնորեն ներդը-
րավելն ե և այն բանին հասնելը, վոր իրա-
պես, բացի կուսակցության անդամներից, և
համենայն դեպս, բացի յուր գերատեսչու-
թյան ներկայացուցիչներից, աշխատանքով
շահագրգոված և այդ աշխատանքի մեջ ներ-
դրավկած լինի, վորքան հնարավոր ե, ան-
կուսակցականների ավելի լայն մասսա։ Մեզ
թվում ե, վոր այդ անել այլ կերպ, քան
հաշվետվությունների, դոնե նրանց ամենից
եյական մասին՝ հրապարակումն ե,— չի կա-
րելի։ Կան հիմնարկներ, վորոնք չափազանց
լրիվ հաշվետվություններ են տալիս։ Այն ա-
մենը, ինչ վոր մենք մինչև այժմ գիտեյինք
այս հարցի մասին, ապացուցում ե, վոր կան
հիմնարկների դրված տեղական հիմնարկներ։ Հա-
մենայն դեպս, տեղերի աշխատանքը բավա-

կանաչավի խրախուսիչ տրամադրության համար շարունակ բավականին նյութ ե տալիս։ Ինչ վոր իսկապես պակասում ե մեղ մոտ—լավ որինակները լայնորեն ովտագործելու հըմտությունն ե այդ,—դրանք քիչ են մեղ մոտ, վորպեսզի դրանք բոլորի համար պարտադիր որինակ դարձնենք։ Մեր մամուլի որդաններում գործնական փորձ ունեցող իսկապես որինակելի տեղական հիմնարկների այդ ռազմագործմը չկա։ Հաշվետվությունների այդ տպագրումը, բնակչության լայն մասսաներին մատչելի դարձնելը և նույնիսկ յուրաքանչյուր զավառական գրադարանում կենտրոնացնելը պետք է ծառայի կանոնավոր հավաքած անկուսակցական կոնֆերենցիաների ոգտին՝ տնտեսական շինարարության աշխատանքի մեջ ավելի լայն մասսաներ ներգրավելու համար (ընդգծումն իմն ե։—Ն. Կ.)։ (Յերկեր, XXVI հ., եջ 412)։

ՈԿ(Ր)ԿԵԿ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻՑ

1921 թ. նոյեմբերի 16

Նոր տնտեսական քաղաքականության կապակցությամբ, պետական ռեսուրսների պակասության ու դրա հետեանքով լուսավորության հիմնարկների պահպանման գործի համար տեղական միջոցների ներգրավման անհրաժեշտության կապակցությամբ, լուսավորության աշխատողների մեջ, անկասկած, յե-

ըևան ե գալիս շփոթվածություն ու ձգտում՝
պահպանել լուսավորության հիմնարկները
կոմունիստական կուսակցության համար ա-
նընդունելի միջոցներով, ինչպես՝ վճար
մտցնելը ուսման համար, գրադարաններից,
ակումբներից ոգտվելու համար և այլն (ընդ-
գծումն իմն ե:—Ն. Կ.):

... Կենտրոնական կոմիտեն Ո.ԿԿ բոլոր
անդամների ուշադրությունն ե հրավիրում
դպրոցների, դրադարանների և այլ հիմնարկ-
ների նյութական բարեկեցության պահպան-
ման այդպիսի պրիորների անթույլատրե-
լիության վրա:

... Անհրաժեշտ ե լուսավորության հիմ-
նարկները, մասնավորապես դպրոցները,
պաշտպանել մանր-բուրժուական տարերքից:
Անհրաժեշտ ե միջոցներ ձեռք առնել նրա հա-
մար, վորակեսղի մանկավարժը դպրոցի պահ-
պանման համար իր միջոցները մուծող հա-
րուստ քաղքենուց կախման մեջ չլինի: Ան-
հրաժեշտ է պահպանել դպրոցի ու գրադարա-
նի անվճարության սկզբունքը (ընդգծումն
իմն ե:—Ն. Կ.)*:

*) „Справочник парт. работника“ II պրակ, 1922
թ., եջ 175: ԽՄԲ.

ՀԱՏՎԱԾ՝ ՔԱՂԱՔԻ ՍՎԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ Ա
ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ ԱՐՏԱՍԱՆԱԾ ՅԱՌԻՑ

... Այս գեռ քիչ է, բավական չե անզրատ-
ությունը վերացնելը, այլ պետք է նաև
խորհրդային անտեսություն կառուցել, իսկ
այս գեղջում միայն գրադիտությամբ հեռու
չես գնա: Մեզ կուլտուրայի հսկայական
բարձրացում ե պետք: Պետք է, վոր մարդ ի-
րականում ոգտվի կարգալու և գրելու հրմ-
տությունից, վորպեսզի նա կարդալու բան
ունենա, վորպեսզի նա թերթեր ու պրոպա-
գանդիստական բրոշյուրներ ունենա, վոր-
պեսզի սրանք նիշտ բաշխվեն ու հասնեն ժո-
ղովրդին (ընդգծումն իմն է:—Ն. Կ.), վոր-
պեսզի դրանք չկորչեն ճանապարհին, այն-
ուես վոր դրանց կեսից ավելին չի կարդաց-
վում և ինչ-ինչ բանի համար գործադրում են
դրասենյակներում, իսկ շատ կարելի յե, վոր
ժողովրդին նույնիսկ մի՛ քառորդն ել չի հաս-
նում: Պետք է սովորել ոգտվել այն քչից,
վոր մենք ունենք: (Յերկեր, XXII, հ., եջ
48):

Ի. Ի. ՍՏԵՓԱՆՈՎԻ ԳՐՅԻՆ ԿՑԱԾ ԱՌԱՋԱԲԱՆԻՑ
ՌԽՖՍՀ ԵԼԵԿՏՐՈՓԻԼԿԱԳԻԱՆ ՀԱՄԱՉԽԱՐԻԱՅԻՆ
ՄԻՏԵՍՏՈՒԹՅԱՆ անցողիկ փուլի կապակցու-
թյամբ

... Խորհուրդների ութերորդ համագու-
մարը վորոշեց, վոր ելեկտրիֆիկացիայի պր-

լանի դասավանդումը պարտադիր և ՌԽՖՍՀ
բոլոր—առանց բացառության բոլոր—ուսում-
նական հիմնարկներում։ Այս վորոշումը,
ինչպես և շատ ուրիշները, թղթի վրա մնաց
մեր (մեր, բոլշևիկներիս) անկուլտուրակա-
նության հետեանքով։ Այժմ, յերբ լույս է
տեսել ընկեր Ստեղանովի սույն «Զեռնարկ
գպրոցների համար», հարկավոր և հասնել,—
և մենք կհանենք, —այն բանին, վոր յուրա-
քանչյուր գավառական (ապա նաև յուրաքան-
չյուր վոլոստային) գրադարանում մի քանի
որինակ լինի այս «Զեռնարկից» (ընդգծումն
իմն է :—Ն. Կ.), — վորպեսզի Ռուսաստանի
յուրաքանչյուր ելեկտրակայանում (իսկ սր-
բանց թիվն 800-ից ավելի .յե) վո՞չ միայն լի-
նի այս գիրքը, այլև անզայմանորեն հանրա-
յին, ժողովրդական ընթերցումներ կազմո-
կերպվեն ելեկտրականության ու ՌԽՖՍՀ ե-
լեկտրոֆիկացիայի և ընդհանրապես տեխնի-
կայի մասին. — վորպեսզի յուրաքանչյուր
գպրոցում ամեն մի ժողովրդական ուսուցիչ
կարդա և յուրացնի այս «Զեռնարկը» (այս
գործում նրան ողնելու համար յուրաքանչյուր
գավառում պետք և կազմակերպվի ինժեներ-
ների ու Փիզիկայի դասատուների խումբ կամ
խմբակ), և վո՞չ միայն կարդա, ըմբռնի և
յուրացնի ինքը, այլև կարողանա այս հառ-
կանալի ու պարզ կերպով վերապատմել դըր-
բոցի աշակերտներին ու գյուղացի յերիտա-

սարդությանն ընդհանրապես։ (Յերկեր,
XXVII հ., էջ 196)։

Ընկեր ԿՍՐՊԻՆՍԿՈՒ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

Վլադիմիր Իլյիչը, ինքնին հասկանալի յեւ, դատապարտելի կամ իր արժանապատվությունից ցած չեղ համարում լինել Գ. Ա. Կուկլինի* անվան գրադարանի ամենից ճշշտապահ աբոնենտներից մեկը։ Նա ամբողջապես խրախուսում ու գնահատում եր մեր մտցրած «Խիստ» կարդուկանոնը, վորն ապահովում եր գրքերի ճիշտ ըրջանառությունն ու հազվագյուտ որինակների և արխիվային նյութերի անվթարությունը։ Վլադիմիր Իլյիչը վոչ մի գիրք կարդալով չեր փչացնում և կարդալու համար միշտ վճարում եր ըստ տարիքի։ Իհարկե, կուսակցական գրադարանը թեպետ և գոյությունը պահում եր բացառապես ընթերցողներից ստացած բաժնորդավըռնարով, բայց անպայման կարող եր բացառություն անել կուսակցության ԱՕ-ի խրմ-

*) Ի նկատի ունի «Ճնշի ոռւսական գրադարանը, վորը հիմնագրել է ՌՄԴԲԿ անդամ Գ. Ա. Կուկլինը և վորն այդ գրադարանը կտակեց կուսակցությանը։ Գրադարանը հանրամատչելի յեր գործել է նա 1902 թ. ընդհուպ մինչև 1917 թ.։ 1907 թ. Գ. Ա. Կուկլինի մահից հետո գրադարանն անհերթափոխ կերպով վարում էյին Վ. Կարպինսկին և Ս. Ռազիչը։ Ն. Կ.

բազրի համար։ Բայց Վլադիմիր Իլյիչին այդ
 թվում եր անձնական «արտոնություն»։ Գրա-
 վարանավարական խմ պրակտիկայում այդ-
 միակ, բոլորովին բացառիկ դեպքն ե յեղել,
 յերբ ստիպված եմ յեղել արտնենտին համո-
 վել՝ վոչ թե այն, վոր նա պետք ե վճարի
 կարդալու համար, այլ այն, վոր նա չպետք ե
 վճարի։ Սակայն գրանում համոզել Վլադի-
 միր Իլյիչին՝ անհնար եր։ Նա փող ունի—ու-
 րեմն պարտավոր ե վճարել, ել վոչ մի խոսք։
 Միակ բանը, վորին վերջ ի վերջո Վլադիմիր
 Իլյիչը համաձայնվեց, կամ ավելի ճիշտ,
 վորի հետ նո հաշտվեց—այդ այն եր, վոր
 գրադարանը նրան չեր սահմանափակում
 վեցցրած գրքերի քանակությամբ ու կարդա-
 լու ժամկեաներով։

(„Записки Института Лепина“ հ. II, էջ 97)

ԱՌՅԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ
 ԲՆԱԳԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ^{*)})

Լենինը հսկայական նշանակություն եր
 առլիս գրադարանային գործի լավ գրված-
 քին։ Կուլտուրական ֆրոնտի այդ տեղամա-
 սին բացառիկ մեծ ուշագրություն եր նվե-
 րում։ Այդ ժամին պերճախոս ձեռվլ վկայում

^{*)}) «Պրակտա» № 276, 1933 թ.։

և «ինչ ե ասել ու գրել Լենինը գրադարանների մասին» գրքույկը, վորտեղ հավաքված են նրա մի շարք նամակները, հոգվածները, ճառերը, կարգադրություններն ու իր միջոցով անցկացրած գեկրետները։ Նրանցից յերեսում է, թե ինչպիսի ուշադրությամբ նա հետևում էր գրադարանային գործի գրվածքին, ինչպես կոնկրետ ելին նրա ցուցումները։ Քաղաքացիական կոխվների տարիներին ու Նեպի տարիներին գրադարանային ֆրոնտում ըստեղծված ե յեղել վո՛չ քիչ արժեքավոր բան, սուկայն վո՛չ պակաս չափով արժեքավոր ձեռնորկումներ խափանվել են քաղաքացիական կոխվների շատ ծանր կացության ու տեղերում «տնահաշվարկը» հաճախ սիալ հասկանալու հետևանքով։

Ոորհուրդների յերկրում այնպես կառուցել գրադարանային գործը, վոր տարբեր տիպի գրադարանների խիտ ցանցը ժամանակին՝ սպասարկի ամբողջ ժողովրդին դլխովին՝ նրան պետք յեկող գրքով, բավարարի մասնայի՝ գիտելիքների հարածուն պահանջը, շայնացնի նրանց հորիզոնը, պատասխանի նրանց հարցերին, —այսպես եր Լենինի պատկամը։

Լուսժողկոմատում այժմ կազմակերպվում է հատուկ գրադարանային վարչություն, վորու պետք ե այդ գործը դնի պատշաճ բարձրության վրա։

Առաջին անհետաձգելի ինդիքը—այդ՝
արդեն գոյություն ունեցող գրադարանները
և ամսապատճախան շենքերով ապահովելին է:
Անհրաժեշտ է, վոր գրադարանների շենքերը
լինեն աղատ, լուսավոր, չոր, լավ տաքաց-
վեն, վոր գրադարաններին կից լինեն հար-
ժար ընթերցարաններ:

Նույնպիսի հոգատարություն, վորպիսին
մենք տեսնում ենք այժմ դպրոցական շենքե-
րի նկատմամբ, պետք է ցուցաբերել և՛ գրա-
դարանային շենքերի նկատմամբ։ Պետք է աշ-
խատենք—հասնենք այս բանին։ Պետք է մի-
անդամից ընդմիշտ վերջ տալ իրերի այն գր-
րությանը, յերբ ժողկրթության բաժնի վա-
րիչը՝ գրադարանի շենքը հատկացնում է ման-
կապարտեղին, դպրոցին, ուսանողական հան-
րակացարանին, գրադարանը տեղափոխելով
ավելի նեղ, մութ, խոնավ, ընթերցողների
համար անհարմար շենքեր, կամ ուղղակի
գրքերը նետում են մի նկուղ, վորտեղ և նրանք
վոչնչանում են։ Ժողկրթության բաժինների
այդպիսի վարիչներին առանց հապաղելու
պետք է հանել պաշտոնից, հանձնել դատա-
խազությանը։ Սակայն միայն ժողկրթության
բաժինը չե կարգադրողը։ Մենք գիտենք վո՞չ
քիչ գեպքեր, յերբ ռայխորհուրդները գրադա-
րանային շենքերը վերցնում են բնակարաննե-
րի, առեւտրական հիմնարկների համար։ Գրա-
դարանային վարչությունը այդ բանին պետք

և վերջ տա: Նրան ողնության պետք է զան
դատախազությունը, ԲԳԾ-ն, խորհրդային
հասարակայնությունն ու առաջին հերթին
խորհրդադները և նրանց սեկցիաները:
Մեր յերկիրը կուլտուրապես աճել է. ռա-
յոններից շատերի այդպիսի վերաբերմուն-
քը դեպի գրադարաններն ու գրադարա-
նային ուսուցվածքը, դեպի գրքային հան-
րային սեփականությունը — պետք է անար-
գանքի սյունին գամել:

Մեր գրադարանային ցանցը, հատկապես
գյուղում, շատ անբավարար է: Պետք է կա-
ռուցել նոր գրադարաններ, բայց խելացիորեն
կառուցել: Ինչքան դեպքեր են նկատվել — շատ
մեծ միջոցներ են ծախսվում, բայց խղուր
տեղը, կամ մի նոր գրադարան են կառու-
ցում, մյուսի կողքին, միայն ավելի ձոխ
(հաճախ գերատեսչությունները «մըցում» են,
մեկը մյուսի մոտ մեծ գրադարաններ կառու-
ցելով), կամ կառուցում են մի այնպիսի տեղ,
վորտեղ ազդաբնակության համար հարմար
չե նրանից ոգտվել, կամ գրադարանների հա-
մար հարմարեցնում են հին զորանոցների որ-
բահները: Ստացվում են ցուրտ, խոնավ, ան-
պետք չենքեր: Այստեղ անհրաժեշտ են՝ պլա-
նայնություն, տեղական պայմանների հաշ-
վառում, վաղվա որվա հաշվառում:

Գերատեսչությունների և կազմակերպու-
թյունների միջև փոխհամաձայնեցում պետք է

լինի։ Պետք է մշակել տիպական պայմանագրեր, վորոնք կողմնեցին, վոր յուրաքանչյուր դրադարան առավելագույն չափով ոգտադորժին։

Առանձնապես մեծ ուշադրություն պետք է դարձնել կոլտնտեսային գրադարանների տիպերի վրա, վորոնց գրադարանների կարիքն այնքան զգում են այժմ կոլտնտեսությունները։ ՄՃԿ կից քաղրաժիններն այստեղ շատ բանում կարող են ոգնել։

Եթանային գրադարանները պետք է ողնեն խրճիթ-ընթերցարաններին, կոլտնտեսային ակումբների գրադարանները կոմպլեկտավորելու դորձին, պետք է հրահանգավորեն այդ գրադարանների ղեկավարներին, ողնեն նրանց գրադարանային տեխնիկային տիրապետելու դորձում, ողնեն զպրոցական գրադարաններին։

Գրադարանային տեխնիկայի հարցերից շատ բան է կախված—գրքերի պահպանումը, գրքային հարստության առավելացույն ողտագործումը, ընթերցողների հարցումների բավարարումը և մինչև իսկ գրադարանի քողաքական գեմքը։ Տարրեր ոփոխի գրադարանների համար տարրեր տեխնիկա յե հաբկավոր։ Կորենոր է իմանալ ուղած գիրքը ռեկլում տնել, առաջ շարժել, կարեոր է գիտենալ դրքի շրջանառությունը մեծացնել, հրահանգավորումը կաղմակերպել և այլն և այլն։

Գրադարանային տեխնիկայի բնագավառում
մեզ մոտ թագավորում է մեծ անտեղյակու-
թյուն, վորը խանգարում է գործը ճիշտ դնե-
լուն:

Տնտեսական ու կուլտուրական շինարա-
րության արագ տեմպերը պահանջում են հա-
մեմատարար կարճատև ժամկետներում մաս-
նագիտական կաղըեր պատրաստել: Նրանց,
ինչպես և սոց. շինարարության մյուս մաս-
նակիցներին, շատ բան պետք է ինքնակայորեն
սովորել: Նրանց գրքեր են պետք: Գիտական
գրադտրանները մեր պայմաններում ինչ-վար
ինքնապարփակ բան լինել չեն կարող, վորո
մատչելի լինի միայն մարդկանց նեղ շրջանա-
կին: Նրանք պետք ե ողնեն արդեն աշխատան-
քի անցած և նրա համար պատրաստվող մաս-
նագիտական կաղըերի գիտական վորակավոր-
մանը:

Գիտական գրադարանները պետք ե լայն
րացեն իրենց դռներն այն մարդկանց առողջ,
վորոնք լրջորեն ցանկանում են սովորել, խո-
րացնել իրենց գիտելիքները: Անհրաժեշտ ե
իշուագատել, թե ի՞նչպես պետք ե անել այդ
լավագույն ձեռվ: Գրադարանային վարչու-
թյունների մեջ կմտնեն վո'չ միայն մասսա-
յական, այլև գիտական գրադարանները:

Շատ կարևոր ու մեծ հարցը—գրադա-
րաններին գրքեր մատակարարելու հարցն է:
Ինչպե՞ս պետք ե մատակարարել գրադարան-
ները: Ինչո՞վ սնել:

Գրքերը, ինչպես ասում են, ընդունակ են «բարոյապես հնանալու» (ստարεատ): Նրանք բարոյապես հնանում են հատկապես մեր բուռն թափով ընթացող կյանքի պայմաններում: Հին ցենզուրային պայմաններում յեզուպասյան լեզվով գրած գրքերը, նախկին տիրող դասակարգերի համար գրած գրքերը, վորոնք վերաբերում են այդ դասակարգերին հուզող հարցերին, յեթէ անգամ նրանք զեղարկեստականորեն են գրվել, քիչ են հետաքրքրում ժամանակակից մասսայական ընթերցողին: Նա ծարավ է այնպիսի գրքերի, վորոնք մոտիկ են իրեն, վորոնք խոսում են նրան ավշալ վայրկյանում հուզող հարցերի մասին: Սոցիալիստական շինարարության հարվածայինին հին գրականությամբ չեն կերակրի: Յեկ գրադարանը, վորն ամեն ժամանակ չի համալրվում նոր լույս տեսնող գրականությամբ, կորցնում է իր հետաքրքրությունն ընթերցողի համար, նա գաղարում է գրադարան հաճախելուց, անտարբեր է գտնում դեպի գրադարանը:

Պետք է սերտ կտապ ստեղծել մեր մասսայական գրադարանների ու մեր ժամանակակից գրողների միջև: Գրողը պետք է հաշվի տոնի ընթերցողի պահանջները, գրադարանյին ընթերցողի ձայնը պիտի լսվի նաև հըրատարակչական պլաններ կազմելու ժամանակ:

Սա հարցի մի մասն է։ Մյուսը—մատակարարման տեխնիկան է, բաշխման տեխնիկան։ Ի՞նչ թաղցնենք մեղքներս։ մեր գիրք մատակարարող որդանները դրադարանների նկատմամբ ամենուր դատում են հին ձեռվ։ «ինչ վոր մեղ պետք չե, քեզ ձեռք կտա,»— լավը կթողնենք վաճառքի, իսկ ինչ վոր կը մնա, կսաղացնենք դրադարաններին։ Մինչդեռ գրքերի բաշխումը մեղ մոտ պետք է կատարվի սոցիալիստական ձեռվ, և լավ գրքով առաջին հերթին պետք է մատակարարենք կոլեկտիվ ոգտագործման որդաններին — դրադարաններին և վո'չ թե մասնավոր սպառողին։ Շատ և շատ ուժեր պետք է ծախսել՝ գրքի մատակարարման գործում հաստատված տրադիցիաները ջախջախելու համար։

Այնուհետ գալիս և հաշվառման հարցը։ Հաշվառումը գրադարանային ֆրոնտում մեզ մոտ կազում է չորս վոտով։ Վերցնում ես վորեւե մարզի տվյալները — այնտեղ հաշվի յեն առնված միայն քաղլուսվարական գրադարանները, մյուս մարզի տվյալներում՝ հաշվի յեն առնված միայն պրոֆմիութենական գրադարանները, յերբորզի տվյալներում պրոֆմիութենականները հաշվի չեն առնված, բայց հաշվի յեն առնված խրճիթ-ընթերցարանների գրադարանները և այլն և այլն։ Դրա փոխարեն յուրաքանչյուր գրադարանի հաշվառում իր մեջ ներառում է բազմաթիվ ցուցանիշ-

ներ, խլում ահագին ժամանակ։ Ստացվում
են անհամեմատելի նյութեր, վորոնց գործ
զնել չի կարելի։ Բայ յերևութին մնում է
մի խորհուրդ ունենալ Ժողովնահաշվառման
կենտվարչության ու Պետպլանի հետ, վորոն
ասի, թե ինչպես անցկացնել ամենից հիմ-
նական ավյալների հաշվառումը, — բայց
խկական հաշվառում, առանց վորի բոլոր
ֆին-պլանային հարցերը կախված են մնում
ուժից, բոլոր հաշիմները կատարվում են
«աչքաշափով»։

Գրադարանը չի կարող աշխատել առանց
գրադարանավարի։ Գրադարանավարը գոր-
ծի հոգին ե։ Նրանից անշատի շատ բան է
կախված։ Նա պետք է լինի իր գործի ենաու-
ղիաստը, իմանա աշխատել ընթերցողների
մասսայի հետ, տիրապետի գրադարանային
աշխատանքի մեթոդներին, իմանա այդ մե-
թոդներով կազմակերպել գրադարանի վողջ
աշխատանքը։ Գրադարանավարը մեր խոր-
հրեգային գրադարաններում չի կարող լինել
գրքերի սոսկ տեխնիկական ավող, նա պետք
է տիրապետի վո՛չ միայն գրքեր տալու, գը-
րանցելու տեխնիկային, կարողանա հաշվի
առնել բաժանորդների թիվը, թեև անպայ-
ման պիտի կարողանա անել և այդ։

Այդքանը կարենալն անհրաժեշտ է, սա-
կայն շատ հեռու յե գոհացուցիչ լինելուց
Մեր խորհրդային մասսայական գրադարանը

չի կարող, չպետք է վերածվի բյուրոկրատական հիմնարկության. նա պետք է լինի կենդանի, կուլտուրական կենտրոն իսկ այդ պահանջում է գրադարանավարից ունենալ մասնային մոտենալու, մասսայի հետ աշխատելու հմտություն, իմանալ նրա պահանջները, կարողանալ նրա հետաքրքրությունն ուղղել գորոշակի հունով, զարթեցնել ընթերցողի ինքնազործունեյությունը, նրանց մեջ հրահանգավորման մեջ աշխատանք տանել: Խորհրդադային գրադարաննավարը պետք է լինի կրթված և քաղաքականապես կոփված անձնավորություն խորհրդային գրադարանավարը— սցիալիստական շինարարության պատասխանառու մասնակիցն է: Գյուղում նրա գերը վոչ թե փոքր է, այլ ավելի մեծ, քան գրադաքում:

Դրա համար ծայրահեղորեն կարևոր են գրադարանային աշխատողների խելամիտրներությունը, նրանց կանոնավոր պատրաստումն ու վերապատրաստումը: Հստ 1933թ. տվյալների գրադարանավարների 36 տոկոսը չունի վոչ մի գրադարանային պատրաստականություն, 24 տոկոսն ունի յոթամյակրթություն և կամ գրադարանային աշխատանքի մեկ տարվա ստաժ, կամ կարճատե գասընթացներում ստացած գրադարանային պատրաստություն: Այլ խոսքով այժմյան գրադարաննավարների 60 տոկոսն այս գործի անպատրաստ սկսնակներն են. պարզ ե

հաեւայդ կաղմի հսկայական հոսունությունը .
խեկ հոսունությունը գրադարանային Գրքոն-
տում նշանակում ե՝ փաստորեն վատնել գրա-
դարանային ֆոնդերը, ընթերցողներին մո-
ռացնել տալ գրադարանները։ Մնացած 40
տոկոսից 15 տոկոսը գրադարանավարներ են՝
գրադարանային տեխնիկումի (ստացիոնար
կամ հեռակա) կրթության ծավալով ու թերի
ժիշնակարգ կրթությամբ աշխատողներ—
յերկու տարուց վոչ պակաս պրակտիկ աշխա-
տանքի ստաժով։

Ինչպես տեսնում ենք, այս կարգին պատ-
կանողները ևս պատրաստակամությամբ շտա-
թույլ են, և միայն մնացած 25% -ին կարելի
յե անվանել իսկական գրադարանավարներ։

Այսպիսով գրադարանային կարենքի
ֆրոնտում մենք ունենք կատարյալ նեղվածք։
Այս մասին պետք է ասել Հրազդարակորեն,
պետք է բացառիկ ուշադրություն դարձնել
կադրերի պատրաստման վրա։ Այդ այժմ ա-
մենից հարվածային խնդիրն ե։ Հսկայական
սիալ կլինիկ, գրադարանային վարչության
կողմակերպման առիթով, փակել մանկավար-
ժական տեխնիկումներին կից գոյություն
ունեցող գրադարանային բաժանմունքները,
կծկել և այն փոքր աշխատանքը, վորն այժմ
կա։ Պետք է ամենից առաջ ամրացնել այն,
ինչ վոր կա, իսկ հետո գրադարանային վար-
չությանը նյութական հնարավորություններ
տալ՝ հատուկ գրադարանային տեխնիկում-

ների անհրաժեշտ ցանց ծավալելու համար:

Սակայն գրադարանային աշխատողների պատրաստման և վերապատրաստման գործը հաջողություն կունենա միայն այն դեպքում, յերբ բարելավվի գրադարանավարի թե՛ նյուրական, թե՛ բարոյական դրությունը:

Այստեղ մեծ հոգատարություն է հարկավոր գրադարանային վարչության և Յեկորոսի կողմից:

Գրադարանավարին պետք է չբջապատել այնպիսի ուշադրությամբ ու հոգատարությամբ, ինչպիսի հոգատարություն ստեղծվել է ուսուցչի շուրջը: Լավագույն ուժերը պետք է իրենց մոբիլիզացիայի յենթարկեն այդ Փրոնտի համար: Իզուր չե, վոր Վլադիմիր Բլյիչը, գեռ 1919 թ. Արտադրության բաժնին ուղղած իր հատուկ նամակում գրել է գրադարանային ֆրոնտում սոցիալիստական մրցակցության կազմակերպման անհրաժեշտության մասին: Մոցարցումը— լավագույն աշխատակիցներ առաջքաշելու ուղին ե, այդպիսիների աշխատանքը գործնական գուցադրանք դարձնելու ուղին և ցույց տալու, թե ի՞նչողես պետք է գործը հասցնել պատշաճ բարձրության: Ճիշտ դըրքած մրցակցությունը խանդավառության կրակով վառում է այն բնագավառի աշխատողներին, վորտեղ նա կիրառվում է:

Մի շաբաթ պատճառներ,— և՛ մեր անցյալ անկուլտուրականությունը, և՛ գրադարանա-

յին գործի թույլ դրվածքը, և՝ գլխավոր ու-
շադրությունը սոցչինարարության բազմ
ստեղծելու վրա կենտրոնացնելու անհրա-
ժեշտությունը, — հասցըին այն բանին, վոր
գրադարանը դեռևս կենցաղի մեջ չի մտել:
Այսպէս ելինում, — կողքին հոյակապ հանրա-
ժամանք գրադարան կա, մարդիկ չգիտեն ել,
առաջ նրանց գլուխը չի գալիս, վոր նրանից
կարելի յե ու պետք ե ոգտվել: Շատ աշխա-
տանք պետք ե կատարել մասսայական ըն-
թերցող ներգրավելու համար: Յուրաքան-
չյուր գրադարանում պետք ե աճեցնել ըն-
թերցողների տկտիվ, վորը շատ բան կարող
ե անել գրադարանի աշխատանքը պատշաճ
բարձրության վրա դնելու համար:

Իլյիչը զտնում եր, վոր գրադարանային
գործում ես, ինչպէս անգրագիտության վե-
րացման բնագավառում, կարեոր ե, վոր ի-
րենք մասսաները ձեռնամուխ լինեն այդ գոր-
ծին: Նրանց պետք ե միայն սխտեմատիկա-
բար հրահանգավորել գրադարանային շինա-
րարության հերթական խնդիրների մասին:

ԽՍՀՄ-ում գոյություն ունեն դժվարու-
թյունները վերացնելու փորձված ուղինեք:
Մենք կարողանում ենք ուժերը մոքիլիզա-
ցիայի յենթարկել: Այժմ, յերբ կուսակցու-
թյան ուշադրությունը, խորհրդային իշխա-
նության ուշադրությունն ուղղվում ե գրա-
դարանային գործի վրա, մի րոպէ անդամ չի

կարելի կասկածել, վոր գործն արագ առաջ կղնա: Կողնեն խորհուրդներն ու նրանց սեկցիաները, կողնի մամուլը: Կոմյերիտմիությունն արդեն մոտենում է այդ գործին: Անկասկած՝ կողնեն նաև ՄՏԿ-ների քաղբաժինները, գրադարանների առթիվ քաղբաժիններից արդեն նամակներ են գալիս: Կողնեն Յեկպրոսը, լուսաշխատողների վողջ մասսան, վորոնք հասկանում են դրադարանների դերը սոցիալիզմի շինարարության դործում, վորոնք կսովորեցնեն և փոքրերին և՝ հասակավորներին, թե ինչպես պետք է ոգտվել գրադարաններից: Կողնեն բանվորական ակտիվը, կոլտնտեսային դաշտերի հարվածայինները, գրողները, ՃՏՄ-ն, Բուհական աշխատողները և ուսանողությունը, կողնեն բոլոր խորհրդային որդանները:

Յեվ այն ժամանակ մեր Խորհուրդների յերկիրը վոչ միայն գրագետ կդառնա, — նա կդառնա կարդացող, վորն ոգտագործում է դիտության բոլոր նվաճումները, — այն ամենը ինչ վոր դարերով ձեռք է բերել մարդկությունը, դիտությունների, տեխնիկայի, արվեստի բնագավառում, ինչ վոր կրում է իր մեջ դիտելիքները գործնականում կիրառելու վողջ փորձը: Մասսան կվարժվի իսկական ձեռվ սովորելուն: Գրադարանային դործի գարգացումը կամրապնդի դպրոցը, բազմազատիկ կերպով կհեշտացնի նրա աշխատանքը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ն.	Կրուպսկայա — 3-րդ հրատարակության առաջաբանը	3
Ն.	Կրուպսկայա — 2-րդ հրատարակության առաջաբանը	5
Ն.	Կրուպսկայա — Լենինի աշխատանքը գրադարաններում	11
Ա.	Ի. Լենինը — Մ. Ֆ. Անդրեյևային	28
Ա.	Ի. Լենին — Ինչ կարելի յե անել ժողովրդական կրթության համար	29
Ա.	Ի. Լենին — Պետրովգրադի հանրային գրադարանի խնդիրների մասին	35
ԺԿԸ	Վորոշովը գրադարանային գործի դըրվածքի մասին	37
Ժողովրդական	Կոմիտարների Խորհրդի դեկրետ	
	(21 հունիսի 1918 թ.)	39
Ժողովրդական	Կոմիտարների Խորհրդի վորոշումը	
	(14 հունվարի 1919 թ.)	40
Ժողովրդական	Կոմիտարների Խորհրդի վորոշումը	
	(30 հունվարի 1919 թ.)	41
Լենինի նամակը Հուստողկոմատի Արտադպրոցական բաժնին		42

Պազլույնի ճառ արտադպրոցական կրթության Համա-	
ռուսական I համադումարին	45
Ֆեկրետ՝ ՌԽՖՍՀ-ի գրադարանային դործի կենտ-	
րոնացման մասին	48
Հատված արտադրական պլոպագանդայի վերաբեր-	
յալ թեղիսներից	51
«Ռուսժողկոմատի կոմունիստ-աշխատողներին ուղ-	
ղած՝ կենտկոմի դիրեկտիվներ»-ից	53
«Լուսժողկոմատի աշխատանքների մասին» հոդ-	
վածից	53
Նամակ ընկեր Լիսկենսին	59
«Տեղերի տնտեսական որդանների մասին» արտասա-	
նած ճառից	60
ՔԿ(բ)ԿԱ; Հրջաբերականից (16 նոյեմբերի 1921թ.)	63
Հատված՝ քաղուսվարների Համառուսական II հա-	
մագումարում արտասանած ճառից	65
Ի. Ի. Ստեպանովի գրքին կցած առաջարանից	65
ՂԱԿԵՐ Կարպինսկու հիշողություններից Լենինի	
մասին	67
Ն. Կրուպսկայա— Սոցիալիստական շինարարու-	
թյան կարեռը բնադպալառը	68



Գառա . խմբագիր՝ Յե . Անմեղիկյան
Դեղվական խմբագիր՝ Հար . Պետրոսյան
Տեխ . խմբագիր՝ Լ . Ոհանյան
Սրբագրիչ՝ Մ . Մարտիկյան

Գլավլիտի լիազոր՝ Վ . 2002 . Հրատ 4646 .

Քատվեր 577 . Տիրաժ 3000 .

Թուղթ 72×105 . Տպագր . 5 մամ .

Մեկ մամ . 25600 նշան .

Հանձնված և արտադրության 4 հուլիսի 1938թ .

Սոսրագրված և տպագրելու 10 հոկտեմբերի 1938թ .



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0052286

[294]

Գինը 60 կազ.



Ա 1

13235

Н. К. Крупская
Л Е Н И Н
О библиотеках

Гլв Арм. ССР, Ереван, 1938